724

338(47-925)
F-27

1927

17 JAN 2010

4 № «ԴԱՂԱՓԱՐ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 4

338(47.925)
Ֆ-27
724

Ս. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

1927

ՏՊԱՐԱՆ «ՌԻՎՇԱՆԱՅԻ» ԹԷՐԱՆ

4 № «ԳԱՂԱՓԱՐ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 4

493

333(47.925)
Բ-24

Ս. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

1005/20893

Բ:Բ 724

1927

ՏՊԱՐԱՆ «ՌՈՎՇԱՆԱՅԻ» ԹԻԼԻՍԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍԵԱՍՏԻԿԵԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

28 FEB 2013

29399

Գրադարան Հայաստանի Պետական

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Առանձին գրքույկով հրատարակելով մեր աշխատակից Ս. Բաղդասարեանի «Խորհրդային Հայաստան» աշխատութեան առաջին պրակը, մեր նպատակն է գաղութահայ լայն մասսաներին տեղեակ պահել մեր հայրենիքում կատարուող մեծ շինարարութեան հետ ու միաժամանակ ցրել այն սուտ ու սիրալ տեղեկութիւնները, որոնք տարածում են Խորհրդային Հայաստանի հակառակորդները, նպատակ ունենալով գաղութահայութիւնը սառեցնել Մայր Հայրենիքից։

Ս. Բաղդասարեանի գրքույկը թւական տուեալներով հարուստ մի մատչելի ուսումնասիրութիւն է, որն ընթերցողին ծանօթացնում է Հայաստանի զանազան էտապների հետ և ցրում է հակառակորդների յերիւրանքները Խորհրդային Հայաստանի մասին և սէր է զարթեցնում դէպի Նոր Հայրենիքը։

Ս. Բաղդասարեանի աշխատութեան երկրորդ պրակը պարունակում է՝ Հայաստանի սահմանազրութիւնը, իրաւաբանական խնդիրները, պրոֆմիութիւնների շարժումն ու ազգաբնակչութեան աճումը։

«ԳԱՂԱՓԱՐ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայիս 24 1927 թ.
Թէհրան։

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԻՆ

Սույն գրքույկը նախատեսված էր ընկ. Բժ. Ա. Դ. ԶԱՐԵԱՆԻՆ, որը գրդապատճառ և հրահրող եղավ մեր աշխատության շուտ ձեռնարկելուն և գրի առնելուն։

Մեր նպատակն է եղել, որպէս Հայաստանը և հայ ժողովրդին սիրող մի անձնաւորութիւն, անկողմնակալ կերպով գրի առնել այն անց ու դարձը, որ կատարւել է՝ Հայաստանի Խորհրդային դառնալուց անմիջապէս առաջ ու յետո և գրանով նպաստած լինել մեր երկրին, տալով հայրենիքի մասին ճշգրիտ տեղեկութիւններ։ Թէ որքան է այդ մեզ յաջողել, ցոյց կ'տա մօտիկ ապագան, երբ անաչառ քննադատներն իրենց արդարացի խօսքը կասեն։

Այս աշխատանքը, մանաւանդ թւական տուեալների տեսակէտից, կարող է թերութիւններ ունենալ, որովհետև ինչպէս գրուածքի վերջում էլ յիշատակել ենք, մենք գտնւելով հայրենիքից հեռու, շատ հրատարակութիւններ ձեռքի տակ չենք ունեցել, իսկ այն մասերը, որոնք վերաբերում են Հայաստանի խորհրդայնացման սկզբնական շրջաններին, գրուած են ճշգրիտ և անաչառ։

Այս հանգամանքի վրա մենք հարկ համարեցինք շեշտել, որպէսզի նրանք, ովքեր ապագայում ցանկանան յիշեալ մասերը՝ Հայոց Նորագոյն պատմութեան համար որպէս նիւթ օգտագործել, վստահ լինեն այնտեղ արտայայտուած մտքերի ճշմարտութեան մէջ։

Ս. Բ.

1927 թ. Մայիս 20-ին

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԱՌՆԱԼՈՒՑ ԱՌԱՋ

Հայաստանը խորհրդային դառնալուց առաջ, գտնւում էր աժնածանը և դժւարին պայմանների մէջ։

Շնորհիւ Բիւրո կառավարութեան վարած քաղաքականութեան, երկրի խոշոր մասն անցել էր տաճիկների ձեռքը։ Այդ դեռ բաւական չէր, տաճիկները Հանրապետական Հայաստանի կառավարութեանն առաջարկել էին իրենց յանձնել՝ բաւականին մեծ քանակութեամբ ռազմամթերք։ Բիւրո կառավարութիւնը (Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոն, 1920 թ. Մայիս ամսին իրենկառավարութիւն յայտարարեց), ծանր վիճակի առաջ էր կանգնած։ Տաճիկների հետ զինադադար էր կնքել, այժմ եթէ ռազմամթերքը չ'յանձնէր, նորից պատերազմի վտանգի առաջ էր կանգնելու, իսկ դրա համար ոչ մի հնարաւորութիւն չունէր։ Բիւրо կառավարութիւնը մի կողմից ռազմամթերքն էր յանձնում, իսկ միւս կողմից սկսել էր բանակցութիւններ վարել սրա ու նրա հետ, որպէս զի նոր կառավարութիւն կազմի, որը կարողանա տաճիկների հետ հաշտութիւն կնքել։ Առաջարկ եղաւ պ. Յ. Քաջազնունուն. նա ցանկացաւ ժողովրդական կուսակցութեան անդամների հետ կօալիցիոն կառավարութիւն կազմել, չ'ստացաւ։ և հրաժարւեց։ Երկրորդ թեկնածու պ. Ս. Վրացեանը յանձն առաւ և կօալիցիոն կառավարութիւն կազմեց՝ սոցիալիստ-յեղափոխականների հետ միասին։ Պ. Վրացեանի առաջին գործն եղաւ պատգամաւորութիւն ուղարկել՝ Ալէքսանդրապոլ, որը տաճիկների ձեռքումն էր, որպէսզի հաշտութիւն կնքեն։ Պատգամաւորութեան ղեկավարներն էին՝ Ալէքսանդր Խատիսեանն և Աբրահամ Գիւլխանդանեանը։ Դարսի հաշտութեան պայմանագիրը մշակւել է յիշեալ պատգամաւորութեան հետ և ստորագրւել է այդ պատգամաւորութեան կողմից։ Այս մի քանի տողն անհրաժեշտ համարեցինք յիշատակել, որպէսզի վերջ տուած լինենք արտատահմանի մամուլի մէջ հոլովւող անվերջ փոխասացութեանը և փոխադարձ մե-

գաղրանքներին։ Այո, Դարսի դաշնակիրը կնքել է Դաշնակցական (մեծամասնութեամբ) կառավարութեան ժամանակ և նրա համաձայնութեամբ։ Հայաստանի փոքրութեան և սահմանների նեղութեան միակ պատճառը Բիւրո կառավարութեան վարած անիմաստ քաղաքականութիւնն է։

Ս. Վրացեանի կարճատև (4-5 օր) կառավարութեան ժամանակ և դրանից էլ առաջ, ժողովուրդը խիստ անհանդիստ վիճակի մէջ էր գտնուում։ Ժողովուրդն ոչ մի վրկութեան ճանապարհ չէր տեսնում. նրան սարսափ էր աղդում տաճկական եաթաղանը։ Յուսոյ միակ ճառագայթը հիւսիսից էր փայլում և ժողովուրդն իր աչքերը դէպի հիւսիս յառած վրկութիւն էր սպասում։ Ժողովրդի մէջ անվերջ խօսւում էր ռուսի մասին և գտնում էին, որ նրանք միայն կարող են իրենց ազատել այդ վատթարագոյն վիճակից։ Խօսակցութիւններ և կարծիքների փոխանակութիւն կատարւում էին ամեն տեղ և ամեն շրջանում։ Այդ ժամանակներում Երևան էր գալու Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լէգրանը։ Երևանում, այդ օրերում ապրածները, լաւ կ'յիշեն անշուշտ, թէ ինչ ոգևորութեամբ ընդունեց այդ լուրը ժողովուրդը և թէ ինչպիսի անհամբերութեամբ էր սպասում նրան։ Դաշնակցութեան օրգան և կառավարութեան կիսապաշտօնաթերթ «Ցառաջ»-ը, յատուկ առաջնորդող նուիրեց Լէգրանի գալուն և աշխատեց ժողովրդի սպասումների վրա սառը ջուր լցնել։ Դժբախտաբար «Ցառաջ»-ի այդ համարը ձեռքի տակ չունինք, որպէս զի կտորներ հրամցնէինք ընթերցողներին։

Բ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՉՊԷՍ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑԱՒ

1920 թուի Նոյեմբերի 29-ին, Կոմմունիստական կուսակցութեան հայ հատուածի կազմած յեղափոխական կոմիտէն (Յեղկոմ) Ս. Կասեանի գլխաւորութեամբ մտնում է Ղազախ գաւառի Քարանստրա (Իջևան) գիւղը և իրեն յայտարարում է երկրի իշխանութիւն։ Յիշեալ ճակատի զօրահրամանատար Սեպուհը (Դաշնակցական յայտնի խմբապետ), այդ մասին հեռագրում է Երևան՝ Հանրապետական Հայաստանի կառավարութեանն և կարգադրութիւն է խնդրում։ Այս էլ ասենք, որ Սեպուհը խելացիօրէն տեղի է տալիս, ոչ մի գնդակ չի արձակում և դիրքեր դրաւած սպասում է՝ կառավարութեան կարգադրութեանը։ Երևանում, այդ անսպասելի տեղեկութիւնն իրարանցում առաջացրեց (ի հարկէ ղեկավար շրջաններում, գլխաւորապէս Դաշնակցական)։ Դաշնակցական պարլամենտական ֆրակցիան նոյն օրը, նոյեմբեր 29-ին, երեկոյեան

պարլամենտի շէնքում ժողով գումարեց, ուր հրաւիրուած էին, բացի ֆրակցիայի անդամներից, նաև կառավարութեան, կուսակցական մարմինների (կենտրոնական ու քաղաքային կոմիտէների) անդամներն և պատասխանատու կուսակցական ընկերները։

Այդ ժողովում զեկուցեց՝ մեծամասնականների Քարանստրա մտնելու և Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. լիազօր ներկայացուցիչ Լէգրանի հետ կատարուած բանակցութիւնների մասին, այլ և Հայաստանը խորհրդային դառնալու վերաբերմամբ, կոմմունիստական կուսակցութեան վճռի մասին։

Միջանկեալ ասենք, որ Սեպուհին հեռագրուած էր եղել՝ կուի չ'բռնուել մեծամասնականների հետ, մինչև նոր կարգադրութիւն։

Վերոյիշեալ ժողովում մանրամասն քննութեան առնուեց ստեղծուած կացութիւնը։ Մէկ կողմից, տաճիկների հետ դեռ վերջնական հաշտութեան դաշն չէր կնքուած, իսկ միւս կողմից, մեծամասնականների հետ համաձայնութեան չ'գալու դէպքում, նոր պատերազմի առաջ էին կանգնելու։ Պէտք էր ընտրել երկուսից մէկը։ Բոլորի համար արդէն պարզ էր, որ հայ զինուորը, լաւ է ասել հայ ժողովուրդը, ռուսների դէմ չէր կուելու։ Հայ ժողովուրդը ռուս ժողովրդին սիրում էր և փրկութեան յոյս՝ միայն նրա վրա էր դնում։ Այժմս էլ, դրսում հայ ժողովրդի անունից աղմկողները հաւատացած չեն, որ հայութիւնը կուի դուրս կ'գայ ռուսի դէմ։ Ընդհակառակը, բոլորն էլ համոզուած են՝ հայի և ռուսի եղբայրական սիրոյ վերաբերմամբ։ Այստեղ պէտք է խոստովանենք, որ Դաշնակցութեան ղեկավար անդամների մեծամասնութիւնն էլ, ռուսասէրներ էին։ Տաճկահայ հատուածի մէջ միայն կային հատ ու կէնտ ընդդիմադիրներ, որոնք այդ պահին նոյնպէս համակերպւող քաղաքականութեան ուղին էին բռնել։ Մի Կարօ Սասունի, - որ հիմա Ամերիկայում ամբողջ ընտանիքով Հ. Յ. Դաշնակցութեան հաշուին է ապրում և Խորհրդային Հայաստանի հասցէին նիզակներ է ճօճում, այն ժամանակ ձայն տուեց՝ երկիրն առանց կուի մեծամասնականներին յանձնելու օգտին։ Իրերի դրութիւնը մանրամասնօրէն քննելուց յետոյ, ձայն տուեց զինուորական նախարար Դրօին, որի խօսքը վճռական նշանակութիւն ունեցաւ։ Նա յայտարարեց, որ հայ զինուորութիւնը մեծամասնականների (ռուսների) դէմ չի կուի, իսկ եթէ այս ժողովը վճիռ կայացնի, որ պէտք է պատերազմել, այն ժամանակ ես պէտք է բոլոր ճակատներից ջոկեմ հատ ու կէնտ ռուսատեացներ, որոնց թիւն ամենալաւ դէպքում հազարից (1000) չի անցնի։ Ժողովը պէտք է գիտնա, որ մենք ներկայումս գտնւում ենք ամենածանր

դրութեան մէջ և եթէ տաճկական ճակատից ջոկենք ռուսների դէմ կռուող զինուորներին, այդ հանդամանքը միւսների մէջ յուսալքում կ՚առաջացնի։ Դրօի խօսքերը չակերտների մէջ չենք առնում, որովհետև բառացի արտայայտութիւնը չէ, այլ մեր անդաւաճան յիշողութեան վրա հիմնուած ենք մէջ բերել։ Եղան ի հարկէ հակառակ կարծիք արտայայտողներ. բայց այդպիսիների թիւը խիստ սակաւ էր։ Այդ ժողովում մի միջնադէպ տեղի ունեցաւ Յ. Բաջաղնունու, որպէս յանձնման կողմնակից և Ա. Յովհաննիսեանի միջև, որպէս հակառակորդ, բայց այդ միջնադէպը տեղումն էլ յարդուեց։ Միջնադէպի մանրամասնութիւնն այստեղ կարևոր չենք համարում յիշատակել, սակայն փաստը շեշտեցինք, որպէսզի ցոյց տուած լինենք, որ Յ. Բաջաղնունին, դեռ այն ժամանակ էլ, Հայաստանի խորհրդայնացմանը կողմնակից էր։ Հարցը քէէարկութեան դրուեց և մեծամասնութիւն շահեց։ Ժողովին նախագահում էր պ. Աւետիք Սահակեանը (Դաշնակցութեան Հայր-Արբահամը)։ Հայաստանը մեծամասնականներին յանձնելու կողմնակիցների մէջ էին՝ Ա. Սահակեան, Յ. Բաջաղնունի, Դրօ, Ս. Վրացեան, Բժ. Ա. Ղազարեան, Ս. Թորոսեան և այլն, իսկ հակառակորդներն էին՝ Ա. Յովհաննիսեան, Վ. Նաւասարդեան և Ա. Զիլինգարեանը (Ռ. Դարբինեան), ընդամենը երեք հոգի, իսկ չորս հոգի էլ ձեռնպահ էին։ Եթէ չենք սխալւում, ժողովին, Ֆրակցիայի անդամներից մասնակցում էին մօտաւորապէս եօթանասուն անձ. չենք հաշուում մարմինների անդամները և դրանցից միայն երեք անձ դէմ եղաւ։ Ահա այսպիսի պայմաններում կատարուեց Հայաստանի խորհրդայնացումը։ Սրանից մի պարզ եզրակացութիւն կարող ենք հանել. եթէ մինչև իսկ երկիրը կամովին չ՚յանձնէին, այն անցնելու էր մեծամասնականների ձեռքը։ Ուրեմն, երկիրը մեծամասնականներին յանձնելու մէջ, ոչ թէ դեր է կատարել դաշնակցութեան բարի կամքը, այլ այն ժամանակւա ստեղծուած պայմանները մի կողմից, Բիւրօ կառավարութեան առաջացրած վնաստ տրամադրութիւնը՝ միւս, իսկ ժողովրդի ռուսասիրութիւնն էլ երրորդ կողմից։

Այսպիսով կարծում ենք ընթերցողների համար միանգամայն պարզ կ՚լինի, որ խորհրդայնացումը Հայաստանի համար, փրկութեան միակ ելքն էր։ Մեր կարծիքով հայ մեծամասնականներն այդ ժամանակ հայ ժողովրդի (Քրիստոնեական դոյութեան) փրկիչները հանդիսացան։ Եթէ մեծամասնականները չ՚գային Հայաստան, ոչ ոք չի կարող երաշխաւորել, թէ այնտեղ եղած ազգաբնակութիւնն իւր գոյութիւնը կըշարունակէր և ո՞ւ չէր դառնա՝ մի կողմից տաճկական գաղանութիւններին, իսկ միւս կողմից, Վրաստանի բռնած դիրքի պատճառով, սովամահութեան։

Պարլամենտական ֆրակցիայի՝ Հայաստանը Խորհրդային իշխանութեանը յանձնելու վերաբերմամբ, ուած վճռից յետոյ, Հանրապետական Հայաստանի ներկայացուցիչներ Դրօի, Տէրտէրեանի և Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. լիազօր ներկայացուցիչ Լէզրանի միջև, 1920 թ. դեկտեմբերի 2-ին, հետեւեալ համաձայնագիրը կնքուեց.

1. Հայաստանը յայտարարւում է անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն։

2. Մինչև Հայաստանի Խորհուրդների համագումարի հրաւիրումը, կազմւում է ժամանակաւոր ռազմա-յեղափոխական կոմիտէ, որին կանցնի Հայաստանում բովանդակ իշխանութիւնը։

3. Ռուսաստանի Խորհրդային կառավարութիւնն ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան մէջ անվիճելի կերպով մտնում են՝ Երևանի նահանգը իր բոլոր գաւառներով, Կարսի նահանգի մի մասը, որը զինուորական տեսակէտից կ՚պահանջէ երկաթուղու տիրապետութիւնը Զաջուռ կայարանից—Արաքս կայարանը, Գանձակի նահանգի Զանգեզուրի գաւառը և Ղազախի գաւառի մի մասը՝ օգոստոսի 10-ի համաձայնութեան սահմաններում և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետութեան տակ էին գտնւում մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը։

4. Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկւում պատասխանատուութեան այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչև Հայաստանում Խորհրդային իշխանութեան յայտարարումը։

5. Դաշնակցութեան և ուրիշ սոցիալիստական կուսակցութիւնների՝ Ս. Յ., Ս. Դ. անդամները, ոչ մի հալածանքի չպիտի ենթարկւեն՝ այդ կուսակցութիւններին պատկանելու և կոմունիստական կուսակցութեան դէմ ուղած կռիւներում մասնակցելու ու Խորհրդային Հայաստանի յայտարարութիւնից առաջ կատարուած գործերի համար։

6. Ռազմա-Յեղափոխական կոմիտէի մէջ մտնում են՝ 5 անդամներ կոմունիստական կուսակցութեան կողմից նշանակուած և երկու անդամ ձախ-դաշնակցականների խմբակից, համաձայնելով կոմունիստական կուսակցութեան հետ։

7. Ռուսաստանի Խորհրդային կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կենտրոնացնելու Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան անկախութեան պաշտպանութեան համար անհրաժեշտ զինուորական ուժեր։

8. Սոյն համաձայնագիրը ստորագրելուց յետո, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնն իշխանութիւնից քաշւում է։ Իշխանութիւնը, ժամանակաւոր կերպով, մինչև յեղափոխական կոմիտէի գալը, անցնում է զօրահրամանատարութեան, որի գլուխն է կանգնում Դրօն։ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. կողմից Հայաստանի զօրահրամանատարութեան վրայ կոմիսար է նշանակւում ընկ. Սիլինը։

Պատրաստուած է երկու օրինակ։

Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. լիազօր ներկայացուցիչ՝ ԼԷԳՐԱՆ

Հայաստանի Հանրապետ. կառավարութեան լիազօրութեամբ՝

ԴՐՕ, ՏԷՐՏԷՐԵԱՆ։

Այս համաձայնագրի նախագիծը քննւեց Հայաստանի կառավարութեան նիստում, վաւերացւեց և 1920 թ. դեկտեմբերի 2-ին, կէսօրից առաջ ստորագրւեց։

Այնուհետև Հայաստանը Խորհրդային դառնալու մասին տեղեկացւեց զօրքին և ազգաբնակութեանը՝ հրաւիրելով նոր իշխանութեանը հպատակւել։

Թանի որ այս համաձայնագիրը շատ է հոլովւում և օրինակ է ծառայեցնում, թէ Խորհրդային իշխանութիւնն իր իսկ կնքած համաձայնագիրը չ՝յարգեց և միւս կողմից անվերջ գրում և դատապարտում են Խորհրդային իշխանութեանը՝ սահմանների փոքրութեան յանցանքը նրա վրա բարդելով, այստեղ համաձայնագրի առթիւ մի քանի բացատրութիւններ տալը կարևոր ենք համարում։

Վերևում գրւածներից արդէն պարզ է, որ Հայաստանն ինչ վիճակում էր գտնւում։ Կարծում ենք, որ Հայաստանի այդ կրիտիքական վիճակի մասին տեղեկութիւն ունէին նաև Լէգրանն ու իր ընկերակիցները, հետևապէս՝ Խորհրդային Ռուսաստանը։ Պարզ է ուրեմն, որ Հայաստանն իւր այդ վիճակով, չէր կարող Խ. Ռուսաստանին հաւասար կողմ հանդիսանալ, միւս կողմից էլ արդէն յայտնի էր, որ ժամանակական կուսակցութիւնը գիկտատուրային կողմնակից լինելով, ոչ մի կօալիցիա չէր ընդունում։ Հարց է ծառայ գալիս, հապա Խ. կառավարութեան ներկայացուցիչ Լէգրանը ինչու է այդպիսի համաձայնագիր կնքում։

Մեր կարծիքով Լէգրանը վերոգրեալ համաձայնագիրը կնքելով, աչքի առաջ է ունեցել հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան շանը։ Եթէ այդ մոմենտին Լէգրանը նման համաձայնագիր չ՝կնքէր, կարող էր պատահել, որ Դաշնակցական ղեկավարները ծայրայեղ քայ-

լերի գիմէին և իզուր տեղը ժողովրդի արիւնը հոսեցնէին, չ՝նայելով, որ դրանով ոչինչ չ՝պիտի կարողանային շահել, ինչպէս արդէն վերևում յիշւած պատմութիւնը պարզ ցոյց է տալիս։

Կամ ով գիտէ, գուցէ և տաճիկներին դիմէին, կամ երկիրը նրանց յանձնէին... Այժմ դժւար է այդ մասին դրական կարծիք յայտնելը, բայց քանի որ յետագայում նման փաստ տեսել են, միշտ էլ կասկած ունենալ կարող ենք։ 1921 թ. փետրուարեան (18-ի) ապստամբութեան ժամանակ, Փրկութեան կոմիտէի նախագահ Ս. Վրացեանը չը քաշւեց տաճիկների օգնութեանը դիմելուց, որը տաճիկների կողմից մերժւեց։

Լէգրանը լինելով փորձւած քաղաքական գործիչ, հաշի առնելով ժամանակի դրութիւնը, Հանրապետական Հայաստանի ղեկավարների հետ այդ ժամանակաւոր համաձայնագիրը կնքեց, նկատի ունենալով մթմիայն հայ ժողովրդի գերագոյն շանը։

Համաձայնագրի մէջ առանձնապէս կարևոր նշանակութիւն ունի 3-րդ կէտը, որը սահմաններին է վերաբերում։ Այդ կէտում գծւած է այն տարածութիւնը, որի վրա այժմ էլ գտնւում է Խորհրդային Հայաստանը։ Եւ այդ համաձայնագիրը կնքւել է Դաշնակցութեան նախնական քննութիւնից և վաւերացումից յետո։ Հապա դաղութներում Հայաստանի սահմանների փոքրութեան (պատճառը իրենք են եղել) և որոշ հայաշատ վայրերը Հայաստանի հետ կցւած չ՝լինելու մասին, ինչու են հարա-հրոց բարձրացնում։ Պարզ է, որ այդ արարքն եղած կարգերի դէմ հակառակ բանակ պատրաստելու նպատակով է և ոչ թէ իրականութեան համապատասխանող իրողութիւն։ Իհարկէ Խորհրդային Հայաստանն իւր այժմեան սահմաններով շատ է փոքր՝ ամբողջ հայութիւնը ընդգրկելու համար, բայց այդ փոքրութեան յանցաւորներն այժմեան վարիչները չեն, այլ նախորդ, որոնք իրենց անձեռնահասութեան պատճառով, Հայաստանի սահմաններն այդքան փոքրացրին։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում յիշատակել, որ Հանրապետական Հայաստանի վարիչները, իրենց յոյսը դրած լինելով եւրոպական իմպերիալիզմի վրա, ժամանակին մերժեցին Լէգրանի առաջարկը, որով, որպէս հաւասար կողմի հետ և այդ ժամանակ Հայաստանն իրօք կարող էր հաւասար կողմ հանդիսանալ, ցանկանում էր Համաձայնագիր կնքել, Հայաստանին տալով մինչև Սարիղամիշը՝ 1914 թ. սահմաններով։ Կրկնում ենք, այդ ժամանակ մերժեցին, որովհետև դեռ տարւած էին՝ «ծովէ ի ծով»-Հայաստանի ցնորամիտ երազներով։ Սրանից պարզ է, որ այժմեան Հայաստանի սահմանների փոքրութեան մէջ մեղաւորը հենց իրենք Դաշնակցականներն են և ոչ այժմեան վարիչները, որոնք նոյնութեամբ

պահպանել են եղած սահմանները։

Մենք հաւատում ենք, որ սահմանները քարացած չեն, հետևապէս Խ. Հայաստանի սահմաններն էլ, ժամանակի ընթացքում, անհրաժեշտօրէն ընդարձակելու են։

Խնդրում ենք ընթերցողներից, յատուկ ուշադրութիւն դարձնեն նաև համաձայնագրի 6-րդ կէտի վրա, ուր ասւած է «Ռազմա-Յեղափոխական կոմիտէի մէջ մտնում են 5 անդամներ կոմունիստական կուսակցութեան կողմից նշանակւած և երկու անգամ ձախ դաշնակցականների խմբակից»։ Այդ, որ ձախ դաշնակցականների մասին է... Այժմս էլ, երբ հրապարակում գրւում է աջ և ձախ դաշնակցականների մասին, դաշնակցական օրգաններն աշխատում են ամեն կերպ ժխտել, գրելով, որ «Դաշնակցութիւնը մէկ է և միացեալ, չկան նրանում աջ և ձախ բաժանումներ», այս դարձւածքն այն ժամանակի համար աւելի սաղական կ'լինէր, քան այժմեան համար։ Սակայն, այն ժամանակ, ինչպէս ընթերցողները տեսան ձախ դաշնակցականներ էին հրապարակ գրել և այդ ձախ-երի ներկայացուցիչներն էին՝ Դրօն և Համբարձում Տէրտէրեանը, որն աւելի քան ծիծաղելի պէտք է համարել։

Ուշադրութեան արժանի է նոյնպէս և համաձայնագրի 7-րդ կէտը։ Արտասահմանում գոյութիւն ունեցող բոլոր դաշնակցական թերթերը միահամուռ թմբուկ են զարնում, թէ Խ. Հայաստանի սահմաններում ռուսական զօրքեր են կանգնած, հետևապէս Խ. Հայաստանը Ռուսաստանի մէկ նահանգն է, այն էլ ոչ լրիւ։ 7-րդ կէտում, ինչպէս ընթերցողները կարդացին, գրւած է. «Ռուսաստանի Խորհրդային կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կենտրոնացնելու Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան անկախութեան պաշտպանութեան համար անհրաժեշտ զինուորական ուժեր»։ Լէգրանի հետ, ով է համաձայնագիր կնքել. դաշնակցական ղեկավարները։ Մինթէ 7-րդ կէտում պարզ չէ ասւած, որ պէտք է Ռուսաստանից զինուորական ուժեր բերել. ասւած է. ապա էլ ինչու համար են այդ առթիւ եղած մեղադրանքները. դարձեալ ժողովրդին մոլորեցնելու համար. ուրիշ նպատակ չենք տեսնում։

Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԱՌՆԱԼՈՒՑ ՅԵՏՈ

Ա. Սկզբնական շրջան. — 1920 թւի դեկտեմբերի 4-ին, Խորհրդային Հայաստանի Յեղկոմը (Յեղափոխական կոմիտէ) Ս. Կասեանի նախագահութեամբ Երևան հասաւ, օրինական կարգով իշխանութիւնն ընդունեց և գործի անցաւ։ Դժբախտաբար Խ. Հայաստանի առաջին Յեղկոմը, բացառութեամբ մի քանիսի, կազմւած էր, հայրենիքի պայ-

մաններին անծանօթ կամ լաւ է ասել անհեռատես անդամներից։ Յեղկոմի մէջ եղած մի քանի փորձւած և լաւատեղեակ անձերը փոքրաթիւ լինելով, ոչինչ չէին կարողանում անել։ Անփորձ և անհեռատես մեծամասնութիւնը թեք մակարդակի վրա էր կանգնած և պէտք է սայթաքէր ու սայթաքեց։ Խ. Հայաստանի Յեղկոմը բոլորովին հաշիւ չառաւ Հայաստանի ուրոյն պայմաններն և վարւեց այնպէս, ինչպէս մեծամասնականները վարել էին Ռուսաստանում և դա եղաւ Հայաստանի Յեղկոմի ամենախոշոր սխալը, որն և ծնունդ տւեց 1921 թ. փետրուարեան ապստամբութեանը։

Հայաստանն ոչ կալւածատիրական երկիր է և ոչ էլ զործարանային։ Հայաստանն իւր խոշոր մեծամասնութեամբ երկրագործական երկիր է։ Համաշխարհային պատերազմը, որից Հայաստանն անմաս չէր մնացել, մէկ կողմից, հարևանների հետ ունեցած կռիւները՝ երկրորդ, ներքին կռիւներն ու անկազմակերպ վիճակն՝ երրորդ և վերջապէս Տաճկաստանի հետ ունեցած պատերազմը չորրորդ կողմից, կատարելապէս քայքայել ու աւերել էին հայ երկիրն ու ժողովրդին։ Եւ նախորդ գլխի մէջ էլ յիշատակեցինք, որ ժողովուրդը սիրով էր ապասում նրանց, սակայն այդ առիթը չկարողացաւ օգտագործել՝ Խ. Հայաստանի առաջին Յեղկոմը և իւր անեծակ գործելակերպով ժողովրդին կանգնեցրեց փետրուարեան դժբախտութեան առջև։

Փետրուարեան ապստամբութիւնը հաշւելյարդարի ենթարկուց ապրիլի 2-ին (1921 թ.), երբ Երևանը նորից անցաւ մեծամասնականների ձեռքը։ Փետրուարեան դժբախտութիւնը նորանոր գոհերի պատճառ դարձաւ։ Առանց այն էլ քայքայւած ժողովուրդն, աւելի ևս սնանկացաւ։ Ոչ մի կողմից։ Երկրից հեռացան բաւականին կարող և պիտանի ուժեր, որոնք այլ պայմաններում կ'մնային երկրում և կաշխատէին յօգուտ ժողովրդի։ Կրկնում ենք, որ այդ բոլորը եղաւ Խ. Հայաստանի առաջին Յեղկոմի անփորձութեան և անհեռատեսութեան պատճառով։

Ապստամբութիւնն ունեցաւ և իւր դրական կողմերը։ Շատ տեղին է ասւած՝ «Չիք չարիք, առանց բարեաց»։ Ապստամբութիւնը պատճառ դարձաւ, որ Լենինը գրեց իւր պատմական նամակը և հայ մեծամասնականներին հասկացրեց, որ Հայաստանին չի կարելի մօտենալ Ռուսաստանի մասշտաբով։ Ապստամբութիւնից յետո էր, որ Հայաստան եկան և գործի գլուխ անցան աւելի պատրաստի մեծամասնական հայեր, ինչպէս օրինակ՝ Մեսոնիկեան, Լուկաշին, (Ս. Սրապիոնեան), Ս. Համբարձումեան և այլն, որոնք իրենց կողմին միացրին առաջին Յեղկոմի փորձւած և տակտ ունեցող անդամներին ու մի՛ա-

մուռ ուժերով ձեռք զարկեցին՝ հայրենիքի վերաշինման և առաջադիմության գործին։

Ճիշտ է, Զանգեզուրը դեռ մի որոշ ժամանակ էլ շարունակեց դիմադրել, բայց այն էլ վերջ դրաւ՝ 1921 թ. Յուլիս ամսին, որով ամբողջ Հայաստանը նորից Խորհրդային իշխանության ձեռքն անցաւ։

Բ. Ապստամբությունից յետո.— Հայաստանը կրկին անդամ Խորհրդային դառնալով և խորհրդային միության անդամ դառնալով, նրա նոր ղեկավարները մեծ եռանդով ու տակտով գործի լծեցին։ Հայաստանն երկարատև կռիվների (ռուս-տաճկական, հայ-վրացական, հայ-ադրբէջանական, ներքին և հայ-տաճկական) ընթացքում բոլորովին աւերուել և ժողովուրդն էլ տնտեսապէս խիստ քայքայուել էր։ Յայտնի է, որ Հայաստանը գերազանցապէս երկրագործական մի երկիր է և այդքան կռիվների ընթացքում, համարեա բոլոր կողմերի վրա, Հայաստանի ամբողջ ժողովուրդը հիւծուել էր։ Խորհրդային Հայաստանի նոր ղեկավարները գլխաւորապէս ուշը դարձրին գործի վրա և դրանով ցանկացան ժողովրդին ապացուցել և նրանց այդ յաջողուեց, որ իրենք հայ ժողովրդին և հայ հայրենիքը սիրում են և նրա բարգաւաճմանն ու ծաղկմանն են նուիրուած։ Խորհրդային Հայաստանի նոր վարիչները հաւասարապէս ուշք դարձրեցին երկրի տնտեսական բարձրացման, շինարարության, կուլտուրական զարգացման, կոօպերատիւ աշխատանքի ընդարձակման ու առնասարակ ժողովրդի կարիքների բարելաւման վրա, որոնց ստորև յատուկ գլուխներ կընուիրենք և կաշխատենք ընթերցողների համար լիապէս պարզաբանել այն տնտեսական և կուլտուր-շինարարական խոշոր աշխատանքները, որոնք Հայաստանում կատարուել են՝ խորհրդային դառնալուց յետո, անցած վեց տարիների ընթացքում։ Նախքան այդ գլուխներին անցնելը կարեոր ենք համարում ընթերցողների համար պարզաբանել, Հայաստանի իրաւական դրութիւնն և խորհրդային Միութեան մէջ նրա ունեցած տեղը։

Դ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի Խորհուրդների Ա. համագումարը 1922 թ. փետրուարի 2-ին ընդունում և հաստատում է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրութիւնը (հիմնական օրէնք), որն արտացոլում է Հայաստանի պետականության առաջին շրջանը։

1922 թ-ին Խորհրդային Հանրապետութիւններում, իրենց քաղա-

քական և տնտեսական շահերի տեսակէտից առաջ է գալիս՝ այդ հանրապետութիւնների դաշնակցության գաղափարը։

1922 թ. դեկտեմբերի 13-ին, Անդրկովկասեան Խորհուրդների Ա. համագումարում, Անդրկովկասեան Հանրապետութիւնների վերաբերմամբ, այդ գաղափարը համապատասխան պայմանագրերով իրական ձեւակերպում է ստանում և իրագործուում է. իսկ 1922 թ. դեկտեմբերի 30-ին Միութեան Խորհուրդների Ա. համագումարում նոյնը կատարուում է բոլոր Խորհրդային Հանրապետութիւնների վերաբերմամբ։ Ահա դրանց հիման վրա ստեղծուում են՝ Անդրկովկասեան Ֆեդերատիւ Հանրապետութիւնը և Խորհրդային Հանրապետութիւնների Միութիւնը։

Անդրկովկասեան Հանրապետության Սահմանադրութիւնն ընդունուում է 1923 թ-ի յունուարի 16-ին, իսկ Խորհրդային Միութեան Սահմանադրութիւնն ընդունուում է 1923 թ-ի յուլիսի 6-ին։

Խորհրդային Հանրապետութիւնների Միութեան առաջ գալու հետևանքով, 1925 թ. մարտ ամսում գումարուած Հայաստանի Խորհուրդների 6-րդ համագումարը գոյութիւն ունեցող ազգային Սահմանադրութիւնն որոշ փոփոխութիւնների է ենթարկում և յարմարեցնում է նոր կացութեանը։

Այդ Սահմանադրության երկրորդ գլխում ասուում է. «14. Կապիտալիստական օղակի հանդէպ մի խորհրդային ճակատ ստեղծելու և բոլոր Խորհրդային Հանրապետութիւնների հետ սերտ եղբայրական աշխատակցության հիման վրա սոցիալիստական շինարարութիւնն և ազգային զարգացման ազատութիւնն ապահովելու նպատակով՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնը՝ Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության և Ադրբէջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հետ կազմում են՝ Անդրկովկասեան Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութիւն, իսկ վերջինիս միջոցով, որպէս նրա իրաւահաւասար մասը՝ միանում է Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետության, Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության, Ուկրայնայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության, Թուրքմենստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության և Ուզբէգստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հետ և կազմում են միացեալ պետութիւն՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւն»։

Սահմանադրության վերոյիշեալ գլխից երևում է, որ Խ. Հայաստանի, Վրաստանի և Ադրբէջանի միջև փոխադարձ համաձայնու-

թեամբ ստեղծել է Անդրկովկասեան Ֆեդերացիան, որը այդ երկրների ծաղկման և բարգաւաճման համար խիստ անհրաժեշտ է։ Ֆեդերացիայի մէջ մտնող, բոլոր երկրները պէտք է ջանք թափեն աւելի ևս խորացնելու՝ համերաշխութեան և համագործակցութեան գաղափարի օգտակարութիւնը։

Ցարական Ռուսաստանի տապալումից յետո, ընթերցողներն անշուշտ լաւ կ'յիշեն, Անդրկովկասի ժողովրդների քաղաքական կուսակցութիւնները, որպէս կառավարական լաւագոյն ձևը, կիրառեցին Ֆեդերացիան, բայց դժբախտաբար նրա գոյութիւնը կարճատև եղաւ, չնորհիւ նոյն քաղաքական կուսակցութիւնների ազգայնական ձգտումների գերակշռութեան։ Կովկասեան Ֆեդերացիան տապալուեց, իւրաքանչիւր ժողովուրդ ստեղծեց իրը թէ իւր անկախ պետութիւնը, սակայն յետո, բոլորն էլ զոհացին կատարուած սխալի համար։

Նոյն վերոյիշեալ գլխից պարզւում է, որ Անդրկովկասեան իւրաքանչիւր ժողովուրդը Ֆեդերացիայի միջոցով, որպէս նրա իրաւահաւասար մասը՝ մտնում է Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեանը։ Սա նոյնպէս կարևոր է Հայաստանի համար, որովհետև Սոցիալիստական Ռուսաստանն է Հայաստանի իսկական և անկեղծ բարեկամը։ Սոցիալիստական Ռուսաստանի բարեկամութեան և օգնութեան շնորհիւ միայն Հայաստանը կառաջադիմի, կ'ծաղկի և կ'շինուի։

Սահմանադրութեան երրորդ գլուխը նուիրուած է Խ. Հայաստանի գերիշխանական իրաւունքներին և պետական լեզուին, որը ասում է.

«15. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան գերիշխանութիւնը սահմանափակուած է միայն Անդրկովկասեան Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան սահմանադրութեամբ (Հիմնական օրէնք) և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան Սահմանադրութեամբ (Հիմնական օրէնք) մատնանշուած սահմաններով և միայն Անդրկովկասեան Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան իրաւասութեան վերաբերեալ խնդիրների նկատմամբ։

«Այս սահմաններից դուրս Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնն իր պետական իշխանութիւնն իրականացնում է ինքնօրինաբար։

«Անդրկովկասեան Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութիւնը և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւնը պահպանում են Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան գերիշխանական իրաւունքները։

«16. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնն իրեն իրաւունք է վերապահում ազատ դուրս գալու Անդրկովկասեան Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան կազմից, նոյնպէս և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւնից։

«17. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան սահմանները չեն կարող փոփոխութեան ենթարկուել առանց իր համաձայնութեան։

«18. Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետութեան քաղաքացիների համար միութենական միասնական քաղաքացիութիւն է սահմանուում։ Հայաստանում Սոցիալիստական խորհրդային Հանրապետութեան իւրաքանչիւր քաղաքացի ինքնըստինքեան Անդրկովկասեան Սոցիալիստական Ֆեդերատիւ խորհրդային Հանրապետութեան և Սոցիալիստական խորհրդային Հանրապետութիւնների Միութեան քաղաքացի է։

«19. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան պետական լեզուն հայերէնն է»։

Այսպիսով պարզւում է, որ Խ. Հայաստանը, Անդրկովկասեան Ֆեդերացիային և Միութենական իրաւասութեան վերաբերեալ խնդիրների սահմաններից դուրս, իր պետական իշխանութիւնն իրականացնում է ինքնօրինաբար։ Այդ սահմանները թէ որոնք են, յետագայում կը-պարզաբանենք։ 15-րդ յօդուածի որպէս անհրաժեշտ շարունակութիւն դրուած է 16-րդ յօդուածը, ուր Խ. Հայաստանն իրեն իրաւունք է վերապահում ազատ դուրս գալու Անդրկովկասեան Ֆեդերացիայից, նոյնպէս և Միութենական կազմից։ Այս էլ պարզ ցոյց է տալիս, որ Խ. Հայաստանը Ֆեդերացիայի իրաւահաւասար անդամն է և ինչպէս որ իւր կամքով մտել է Ֆեդերացիայի մէջ, այնպէս էլ, եթէ ցանկանա, ազատօրէն կարող է հեռանալ և Ֆեդերացիայի ու Միութենական կազմից դուրս գալ։

Դատելով, որ Ֆեդերատիւ կառավարական ձևը լաւագոյնն է, կարծում ենք, որ Հայաստանի վարիչներն ու ընակիչներն երբէք հեռանալու ու կազմից դուրս գալու ցանկութիւն չեն ունենա, այլ ընդհակառակն ամեն կերպ կ'նպաստեն Ֆեդերացիայի ամրապնդմանը։

Հայաստանի ինքնուրոյնութեան և իրաւահաւասարութեան լաւագոյն փաստ պիտի համարել նաև 19-րդ յօդուածը, որով պետական

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍՍԱՄՆԻԿՅԱՆԻ
Անվան

լեզուն հայերենն է համարում։ Բնականաբար, եթէ մի երկրի կուլտուր-առաջադիմական, դատական և այլն աշխատանքները կատարուում են իր մայրենի լեզուով, այդ երկիրը կասկած չ'կա, որ ինքնօրէն է։

Իններորդ գլխում, որը վերաբերում է Խ. Հայաստանի ժողովրդական կոմիսարիատներին, ասուում է.

«61. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան Ժողովրդական Կոմիսարիատներն Անդրկովկասեան Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան նպատակամբ բաժանուում են՝

ա) Միացեալ Կոմիսարիատների, այն է՝ Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատ, Բանուորա-Գիւղացիական Տեսչութեան Ժողովրդական Կոմիսարիատ, Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատ, Ժողովրդական Տնտեսութեան Խորհուրդ.

բ) Ոչ միացեալ Կոմիսարիատների, այն է՝
Ներքին գործերի Ժողովրդական Կոմիսարիատ,
Հողագործութեան Ժողովրդական Կոմիսարիատ,
Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատ,
Արդարադատութեան Ժողովրդական Կոմիսարիատ,
Առողջապահութեան Ժողովրդական Կոմիսարիատ,
Սոցիալական Ապահովութեան Ժողովրդական Կոմիսարիատ»։

Այս գլխից էլ պարզուում է, որ Խորհրդային Հայաստանը Անդրկովկասեան Ֆեդերացիայի իրաւահաւասար անդամը լինելով, այն կոմիսարիատներն, որոնք ընդհանուր են, կազմուած է միացեալ, այսինքն բոլորի համար էլ հաւասարազօր, իսկ միւս կոմիսարիատներն անջատ են։ Այսպէս Խորհրդային Հայաստանը՝ Ներքին, Լուսաւորութեան, Արդարադատութեան, Հողային, Առողջապահութեան և Սոցիալական ապահովութեան խնդիրներում անկախ և ինքնօրէն է։ Յիշատակուած բաժիններին պէտք է ինքը Խ. Հայաստանը ընթացք տա և նրա վարիչների ձեռնհասութիւնից և աչալրջութիւնից է կախուած, այդ խնդիրներին՝ ճիշտ և օգտակար ուղղութիւն տալը։ Երբ որ շարունակութեան մէջ մենք մանրամասն կանգ կառնենք իւրաքանչիւր բաժնի վրա և առանձին—առանձին կ'մատնանշենք Հայաստանում խորհրդայնացման վեց տարիների ընթացքում կատարուած աշխատանքները, ընթերցողներն էլ մեզ հետ լիապէս կ'համաձայնուեն, որ իրօք երկրում կատարուած և կատարուող աշխատանքներին ցոյց է տրուած ջերմագին և սրբոցաւ վերաբերմունք։

Այստեղ աւելորդ չենք համարում յիշատակել նաև տասներեքերորդ գլուխը, որը վերաբերում է պետական զինանշին ու դրօշակին.

«103. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան պետական զինանիշն է Մեծ և Փոքր Մասիսներից վեր ծագող արեգակի ճառագայթների մէջ մուրճ և մանգաղ միմեանց վրա խաչաձև, կոթերը դէպի վայր, ստորոտում՝ խաղողի որթ ողկոյզով ու տերևներով, աջ ու ձախ կողմերից՝ ցորենի հասկեր և աւելի բարձր՝ ձիթենու ճիւղեր։ Զինանշի կրկնակի շրջագծերի արանքում մակագրուած է՝

«Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն» և «Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք»։

«104. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան պետական դրօշակն է կարմիր (ալ) գոյնի կտոր, որի ձախակողմեան վերին անկիւնում, կոթի մօտ, զետեղուած են ոսկեգոյն տառեր «ՀՍԽՀ»։

«105. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան մայրաքաղաքն է Երևան քաղաքը»։

Կարծում ենք, որ ընթերցողների համար պարզուեց, թէ Խորհրդային Հայաստանը՝ Անդրկովկասեան Ֆեդերացիայի և Ս. Ռ. Խ. Հ. Միութեան մէջ ինչ տեղ ունի և ինչ իրաւական դրութեան մէջ է գտնուում։

Մենք դիտմամբ շօշափեցինք Սահմանադրութեան այն կէտերը, որոնք վերաբերում են՝ Անդրկովկասեան Ֆեդերացիայի և խորհրդային Հանրապետութիւնների Միութեան հետ Հայաստանի ունեցած յարաբերութեանն ու վերջինիս ունեցած իրաւական դրութեանը։

Սահմանադրութեան մէջ, Խորհրդային Հայաստանի ներքին հարցերին վերաբերող շատ հետաքրքիր և ուսանելի յօդուածներ կան, որոնք արժէ որ յատուկ վերլուծութեան և ուսումնասիրութեան ենթարկուեն։

Մեր նիւթի սահմանից դուրս գտնելով, ամբողջ Սահմանադրութեան վերլուծութիւնը, այս անգամ բաւականանում ենք այսքանով։

Ե.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ամեն մի երկրի ծաղկման, առաջադիմութեան և բարգաւաճման զօրակիրակը նրա տնտեսական դրութիւնն է կազմում։ Այդ տեսակէտից, դժբախտաբար, Հայաստանի դրութիւնն աննախանձելի է։

Խորհրդային Հայաստանն ունի երկու պղնձահանքեր, որոնցից մէկն Ալաւերդուանն է, իսկ միւսը՝ Ղափանինը։ Համաեւրոպական, աւելի լաւ է ասել համաշխարհային, մեծ պատերազմի շնորհիւ, որից

անմաս չմնաց նաև մեր երկիրը, այդ հանքերը բարձի թողի էին արել և շատ աշխատանոց ու մաղարաններ էլ աւերել էին։ Հայաստանն ուրիշ հանքեր (մշակված) առայժմ չունի։ Սևանա լճի «իշխան» և այլ տեսակի ձկները տնտեսական տեսակէտից խոշոր տեղ չեն գրաւում։ Երևանում և այլ վայրերում գոյութիւն ունեցող կաշեգործարանները նոյնպէս սահմանափակ դեր էին կատարում։ Հայաստանի բամբակը, բուրդը և կաշեղէնը, որպէս հում նիւթ արտահանւում էր Ռուսաստան և այլ երկիրներ։ Նախքան սահմանների փոքրանալը, Հայաստանը ունէր Կողբի և Կաղզուանի աղահանքերը, մանաւանդ Կողբի աղահանքը, որն իւր յատկութեամբ շատ բարձր և գնահատելի էր։ Նախքան մեծ պատերազմը, Կողբի աղահանքերի շրջանում սկսել էր ոսկու հանքի արտահանումը։ Նշանաւոր էր նաև Սողանլուի անտառները, որից մեծ քանակութեամբ փայտեղէն էր արտահանւում և տրամադրւում էր երկաթուղագծի կարիքների համար։ Այդ բոլորը ներկայումս Հայաստանին չեն պատկանում, ուստի թւածներս ի նկատի ունենալով, պէտք է ասենք, որ Հայաստանի տնտեսական դրութիւնն անբաւարար է։ Տնտեսական դրութիւնը բարձրացնելու մասին, Հայաստանի հանրապետական կառավարութիւնը բացարձակապէս ոչինչ չարեց և չէր էլ կարող անել։ Հայաստանի տնտեսական վիճակը բարձրացնելու համար, ջերմագին աշխատանք է կատարում խորհրդային կառավարութիւնը։

Խորհրդային Հայաստանի կառավարութիւնն իւր գոյութեան վեց տարիների ընթացքում, առանձնապէս ուշք է դարձրել Հայաստանի տնտեսական դրութեան բարձրացման վրա։ Վերևում յիշատակված պղնձահանքերն ոչ միայն նորից գործի են դրված, այլ և ամեն կերպ աշխատում են նրանց արդիւնաբերութիւնն, որ արդէն նախապատերազմական վիճակին է հասցրած, աւելի բարձրացնեն։ Այդ նպատակով, երկաթուղագիծը, որ Ղութաբի հանքերից շատ հեռու էր գտնւում և գրանով քաշում էր գործին, մօտեցրել են հանքերին և այժմ գրանում է ընդամենը 35 վերստի վրա։ Նախկին դրութեան համեմատութեամբ Հայաստանի պղնձահանքերի արտադրութիւնը բաւականին աւելացել է։ Այսպէս օրինակ Ղութաբի պղնձահանքերում 1924-25 թ. արտադրւել է 87,000 փութ, 1925-26 թ. 350,000 փութ։ Նոյն համեմատութեամբ ընթացել է նաև Ալլավերդու պղնձահանքերի արդիւնաբերութիւնը։ Աշխատանքն աւելի արդիւնաւէտ դարձնելու համար հանքերի շրջանում շինված են բանւորական բնակարաններ, հանրակացարաններ, թատրոններ, ընթերցարաններ և այլ գարշայողական հիմնարկութիւններ։

Այսպէս առաջանալով պարզ է, որ տարեց տարի աւելի կ'ընդլայնի Հայաստանի հանքային արդիւնաբերութիւնն, որը մեր երկրի ծաղկման համար խոշոր նշանակութիւն կունենա։

1922 թ-ից սկսած խորհրդային կառավարութիւնը սկսել է Ալլավերդու պղնձահանքերում զարկ տալ կարբիտ—կալցիումի արտադրութեանը։ Պարզուել է, որ Հայաստանի կարբիտն իւր որակով յետ չի մնում արտասահմանեան (շեղական) կարբիտից և այն սիրով ընդունւում է ԽՍՀՄ-ի շուկաներում։

1922 թ-ից սկսած տարեկան արտադրւում էր 2-3 հազար փութ կարբիտ, իսկ 1925 թ. այն հասել է 15,000 փթի։

1925-26 թ. ՀՍԽՀ-ի Ժողտնտխորհը կառուցել է կարբիտի ուժեղ գործարան, որն ունի մի վառարան. սկզբում նրա արտադրութիւնն եղել է 60,000 փութ, իսկ յետագայում աստիճանաբար հասցրուելու է 180 հազար փթի։

Առանձնապէս ուշք է դարձված մեր երկրի լեռնային հարստութիւնների շահագործման վրա։ Մշակված և ռեալիզացիայի է ենթարկված պեմզան։ Հայաստանի պեմզայով մատակարարւում է ԽՍՀՄ-ի ամբողջ շուկան։

1925 թ-ից ձեռնարկված է արծաթա-կապարային հանքերի հետախուզման աշխատանքներին։

1926 թ-ի վերջերում արդէն Ալլավերդու հանքային շրջանում սկսել է ոսկու և արծաթի արտադրութիւնը, որի մասին մանրամասն տեղեկներ, առայժմ ձեռքի տակ չունենք։

Տնտեսական տեսակէտից Հայաստանի համար շատ մեծ նշանակութիւն ունի՝ Խորհրդային կարգերի օրոք Լենինականում հիմնված մանածագործարանը։

Լենինականի (Ալէքսանդրապոլ) մանածագործարանը, վերջնական սարքաւորումից յետո, ունենալու է 20,000 իլիկ և 450 մանածային դազգահ։

Ի հարկէ սա առաջին փորձն է, որին կ'յաջորդի Հայաստանի տեքստիլ արդիւնաբերութիւնը։

Կտորեղէնի գործարանը, մեր երկրում, անպայման ապագա ունի։

Հնում մեր երկրի բամբակը, որպէս հում նիւթ արտահանւում էր այլ երկրներ և այնտեղերից կտորեղէն էր ներմուծւում և աւելի թանկ արժէքներով վաճառւում էր Հայաստանի բանւորներին և գիւղացիներին։ Մանածագործարանը ժամանակի ընթացքում աւելի կ'կա-

ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ ԴԵՊԵԱՏԻՆՆԵՐՈՎ

Գաւառներ	Գաստա-կներ	Այրեցոր-ծական	Վարելահողեր		Խոտհարք-ներ	Ընդամենը պիտանի հող	Արօտաւայրեր			Անտառներ	Անպէտք հողեր	Ընդամենը
			Ջրովի	Անջրդի			Գիւղական արօտավայրեր	Ամա-րային	Ձմեռա-յին			
Նոր-Բայազէտի	1282	—	18023	75724	6795	101824	62612	103150	—	—	135702	403288
Դարալա-գեազի	506	363	3305	19695	24	23893	105763	67000	—	9297	14714	220667
Էջմիածնի	1186	3978	29358	51619	3276	89412	86305	24600	57000	4734	13367	275418
Երևանի	2803	5129	28224	70980	2614	109750	134586	47000	25410	13626	33528	363900
Լօռի-Փամ-բակի	2769	339	2240	98776	27044	131168	60000	62232	—	95000	7600	356000
Լենինա-կանի	2521	239	4388	132700	16850	156695	110042	64763	46000	—	500	386000
Դիլիջանի	1980	522	985	45000	10239	58727	40462	64000	6000	141533	20276	330000
Զանգե-զուրի	739	924	1138	55000	2074	59875	67274	149626	—	42000	15500	334275
Մեղրու	44	216	645	4000	272	5177	16000	5000	20000	18000	7823	72[illegible]00
Ընդամենը	13830	11702	883[illegible]7	553494	69188	736521	683044	587371	154410	324192	257010	2742548

Ինչպէս տեսնում է 8,010 դեսեատինները, ցանքատ է 1 ինչպես ասինք, մի մասը ինչպիսի դարձնում, ամբողջ հողի 1/3-ը, ինչ մասնաւորապէս ուշագրաւ է, ոչ միայն ինչպիսի դարձնում, ամբողջ հողի 1/3-ը, ինչ մասնաւորապէս ուշագրաւ է, ոչ միայն ինչպիսի դարձնում, ամբողջ հողի 1/3-ը, ինչ մասնաւորապէս ուշագրաւ է, ոչ միայն

Ինչպիսի՞ հարստութիւն ունի Հայաստանը (Ամփոփում)։

Ա. Հայաստանի վերաբերեալ ամենաշատ տեղեկութիւնները ունենալու համար պէտք է դիտենանք, թէ ինչպիսի՞ հարստութիւն ունի Հայաստանը։

կ՚մնա ընդամենը՝ 653,503 դեսեատին, որից 553,494 դեսեատինն անջրոի հողեր են, ուրեմն ջրովի հողերի տարածությունն է 100009 դեսեատին։

Հայաստանի տարածությունը, դեռ չ՚հաշված օտար երկրներում գտնված և երկիր վերադառնալու տենչացող գաղթականությունը, երկրում եղած բնակչության համար խիստ քիչ է։ Եթե ի նկատի ունենանք, որ բնակչության աճումն էլ կատարվում է կանոնավոր՝ տարեկան (1926 թվի ընթացքում) 31,069 հոգի ավելանում է, առանց այն էլ դեբաբնակված մի երկրում, պատկերը լիապես պարզ կ՚լինի, որ Հայաստանի տարածությունը նույնիսկ ներկայումս գոյություն ունեցող՝ 1,000,000 բնակչության համար անբավարար է։ Այդ հանգամանքն է պատճառը, որ Խորհրդային Հայաստանի վարիչները ջանք են թափում ջրովի հողերի տարածությունն ընդարձակելու համար, շինելով մի շարք ջրանցքներ, իսկ միւս կողմից էլ աշխատում են կուլտուրական բույսերի ցանքսի տարածությունն ընդարձակել։ Մեր երկիրն իւր հացաբույսերի բերքով չի բավարարվել անցեալում և չի կարող բավարարվել նաև ապագայում։ Ավելի լաւ կ՚լինի, որ ի հաշիւ հացաբույսերի տարածության, ավելի ևս ընդարձակվի՝ բամբակի, ծխախոտի մշակությունը, առանձնապես ուշք դարձվի այգեգործության վրա և ելեքտրոֆիկացիայի շնորհիւ զարկ տրվի գործարանային կեանքին։ Դրանց զուգընթաց անուշադրության չ՚մատնվի նաև անասնապահությունը, որի համար մեր երկիրն ունի բավականին արօտատեղիներ և լայն հնարավորություն։ Եթե չենք սխալվում խորհրդային իշխանությունը հենց այդ ուղղությամբ է լընթանում է, դրա մէջ էլ կայանում է Հայաստանի տնտեսական կեանքի ապագա բարգավաճումը։

Զ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Տնտեսական կեանքի բնական շարունակությունն է կազմում Հայաստանի շինարարական կեանքը, քանի որ շինարարության մեծ մասը նույնպես ծառայում է տնտեսական կեանքի առաջադիմության գործին։

Ի պատիւ Խ. Հայաստանի վարիչների պէտք է ասենք, որ Հայաստանի շինարարության համար ջանք չի խնայվում։

Ա. Խորհրդային իշխանությունը շինարարության ասպարիզում ամենից առաջ ուշադրության է առնում Հայաստանի ոռոգման անբավարարությունն և աչալրջությամբ աշխատում է, որքան կարելի է ջրովի հողերի ֆոնդն ավելացնել։

Հայաստանի շինարարության մէջ, ոռոգման գործի տեսակէտից յիշատակության արժանի են՝

ա) ԷՋՄԻԱԾՆԻ ՋՐԱՆՑՔԸ.— Ճիշտ է այս ջրանցքի կառուցումը ձեռնարկել էր, դեռ ցարական կառավարության ժամանակ, Էջմիածին վանքը՝ իւր հողերն ոռոգելու համար, սակայն նրա կառուցումը լիապես չէր ավարտված։ Մինչև Հայաստանի խորհրդային դառնալն այդ ջրանցքից չ՚կարողացան օգտվել, որովհետև Հրազդանից (Զանգի գետ, Երևանի մօտ) մինչև Էջմիածին հասնելը, ջրանցքի հունը կանոնավոր շինված և վերջացրած չէր։ Երբեմն ջուրը Հրազդանից բացում էին դէպի Էջմիածին, սակայն այն, տեղ չէր հասնում, որովհետև ջրանցքի հունն ամուր և կանոնավոր չ՚լինելու պատճառով, ջուրը ճանապարհին ծծվում էր գետնի տակ և աննպատակ կորչում էր։ Այդպիսի դէպքեր շատ անգամներ են պատահել, մանավանդ Զավարենոց եկեղեցու ավերակներից մինչև Էջմիածին տարածության վրա և այլն։ Խորհրդային կառավարությունն առաջին հերթին ձեռնարկում է այդ ջրանցքի վերանորոգման գործին։ 1921 թ. ծախսում է 130,000 ոսկի ռուբլի, վերջնականապես ավարտում է այդ ջրանցքի կառուցումը, որն ոռոգում է 1200 դեսեատին հող։

բ) ԷՒՋԻԼԱՐԻ ՋՐԱՆՑՔԸ.— Այս ջրանցքի կառուցումը Խորհրդային իշխանության օրոք սկսել և ավարտել է։ Ջրանցքը ոռոգում է 1500 դեսեատին տարածություն և այդ հողերի վրա նոր յատակագծով շինված է Նոր-Եդեմկիա անունով գիւղը, որտեղ մշակվում է նաև ծխախոտը։ Ոռոգող տարածությունից 525 դեսեատին յատկացված է բամբակի մշակությանը, 450 դես.՝ հացաբույսերի, 150 դես. բանջարանոցների և այգիների, իսկ 375 դես. խամ է թողնված։

գ) ՇԻՐԱԿԻ ՋՐԱՆՑՔԸ.— Շիրջրանցքը արդէն մի շատ խոշոր ձեռնարկ է և միանգամայն գովեստի արժանի։ Շիրջրանցքի թունելը մինայն երկու և կէս վերստ երկարություն ունի։ Շիրջրանցքի վրա կառավարությունը ծախսել է 1,600,000 ռուբլի, որը ոռոգում է 12,750 դեսեատին տարածություն։ Այդ ջրանցքի վրա կառուցված է 6000 ձիուժ ունեցող ելեքտրոկայան, որի վրա ծախսված է 4,000,000 ռուբլի։ Շիրջրանցքի կառուցման վրա համեմատաբար քիչ է ծախսվել, որովհետև Շիրակի գիւղացիությունն էլ, ի նկատի ունենալով իւր ապագայի շահը, չի խնայել իւր անձնական օժանդակությունը։ Շիրջրանցքն իւր ելեքտրոկայանով շրջակայքի ազգաբնակության համար տնտեսական խոշոր նշանակություն ունի։

դ) ՍԱՐԴԱՐԱԲԱԴԻ ՋՐԱՆՑՔ.— Այս ջրանցքը սկիզբ է առնում Արաքս գետից, Ղարաղալայի կամուրջի մոտերքից և ոռոգում է 7,700 դեսեատին անջրդի հողեր: Ջրանցքը միանալով տեղում եղած առուների հետ, որոնք նույնպես նորոգված և կարգի են բերված, ոռոգում են՝ 24,200 դես. տարածություն։ Ջրանցքի կառուցումը կառավարությանն վրա նստել է՝ 1,559,000 ռուբլի։ Լուսաւորության և արդիւնաբերական նպատակների օգտագործման համար, այդ ջրանցքի վրա, կառավարությունը ջրաելեքտրոկայան է հիմնելու, որի աշխատանքներն արդեն սկսած են։

ե) ԼՈՒԿԱՇԷՆ ՔԱՂԱՔԸ.— Զմռռանանք և Սարդարաբադի ջրանցքի կից յիշենք նաև Լուկաշէն քաղաքը, որը կառուցված է նոր յատակագծով։ Այդ քաղաքը ընկնում է (եթէ Երևանի կողմից գնալու լինենք) երկաթուղագծի աջ կողմը։ Լուկաշէն քաղաքը մեծ ապագայ է խոստանում։ Այն յատակագծված է ճարտարապետ Թ. Թորոսյանեանի կողմից, որը և հսկում է քաղաքի կառուցման աշխատանքներին։ Լուկաշէն քաղաքը լինելով երկաթուղագծին կից, մյուս կողմից էլ Սարդարաբադի ջրանցքի շնորհիւ բաւարար ոռոգված, իսկ որ գլխաւորն է գիւղատնտեսական աշխատանքները տարուում են այնտեղ մեքենաներով և գործիքներով (տրակտոր և այլն), տեղում ընակեցրած հասակաւոր որբերի եռանդագին ջանքերի և աշխատանքների որպէս պտուղ, կարճ ժամանակի ընթացքում դառնալու է Հայաստանի կարևոր քաղաքներից մէկը՝ իւր սեփական թատրոնով, ելէքտրոկայանով, դպրոցներով և այլ ձեռնարկներով։

զ) ԱՅՂՐ ԳԵՕԼ.— Այդը գեօլն ընկած է Էջմիածնի զաւառում, մէկ վոս տարածութեան մէջ, այնտեղից է սկսվը առնում Ղարասու կամ Սև ջուր գետակը։ Այդը գեօլի շրջակայքում գտնուում է մոտ 5000 դեսեատին տարածություն, որը ջուր չ'լինելու պատճառով, համարեա թէ պիտանի չէր, միւս կողմից այդ գեօլի շրջակայքում գտնուած գիւղերը՝ ֆեոդալները և այլն, միշտ էլ նեղուում էին ջրի պակասությունից։ Դեռ ցարական կառավարության ժամանակ, Էջմիածնի վանքը մտածում էր, եթէ Հրազդանից ջրանցք անցկացնելը չ'յաջողուէր, այդ գեօլից (փոքրիկ լիճ) ջրհան մեքենայով ջուր բարձրացնել և բերել տալ իւր հողերը։ Այդ մտածությունը մնաց մտածմունք միայն։ 1925 թ-ին Խորհրդային կառավարությունը ձեռնարկել է Այդը գեօլի ջուրը ջրհան մեքենայով բարձրացնելու աշխատանքների կատարմանը և իրականացրել է։ 5000 դեսեատին հողը հետևեալ կերպով է օգտագործուում. 1300 դես. յատկացված է հացաբույսերի համար, 1750 դես. բամբակի մշակության,

250 դես. բանջարանոցների և բոստանների, 600 դես. այգիների և 600 դես. էլ մարգերի և խոտի համար։ Այդը գեօլի ջրհանի կառուցման աշխատանքները կառավարությանը նստել են 1,500,000 ռուբլի։

է) ԿԱՐՃԵԻԱՆԻ ՋՐԱՆՑՔԸ.— Մեղրու շրջանի ժողովուրդը սակաւահողությունից տառապում է։ Այդ շրջանում է գտնուում նաև Կարճեւան լեռնային գիւղը, որն աւելի քան սակաւահող է։ Խորհրդային կառավարությունն այդ սակաւահողությունը մեղմելու համար ջրանցք է կառուցել, որով Արաքս գետից ջուրը հոսելու է դէպի Կարճեանի անջրդի հողերը։ Այդ ջրանցքի շնորհիւ ոռոգելու է 600 դեսեատին տարածություն։ Ջրանցքի կառուցման վրա կառավարությունը ծախսել է 200,000 ռուբլի։

ը) ՂԱՄԱՐԼԻԻ ՃԱՀԻՃՆԵՐԸ.— Ղամարլուի շրջանը կարելի է ասել իւր բերրիությամբ, Հայաստանում առաջինն է։ Այդ շրջանը յայտնի է իւր այգիներով, բամբակի մշակությամբ, կոնեակի և օղու բազմաթիւ գործարաններով և այլն։ Բայց այդ շրջանը մի խոշոր պակասություն ունէր. մի հսկայական տարածություն, մոտաւորապէս 2 900 դեսեատին հող ճահիճներ էին։ Ճահիճների շնորհիւ այդ բերրի շրջանի աղգաբնակությունը վատառողջ վիճակի մէջ էր գտնուում և մշտապէս տառապում էր մալարիայից։ 1925 թ. խորհրդային կառավարությունը ձեռնարկել է այդ ճահիճների չորացման աշխատանքներին և գործը աւարտել է, տալով Հայաստանի տնտեսությանը 2900 դեսեատին մշակելի հող և առողջ աղգաբնակություն։

թ) ԹՈԽՄԱԽԱՆ ԳԵՕԼԸ.— Խորհրդային կառավարությունը 1925 թ. սկսել է 75,000 խորանարդ սաժէն տարածություն ունեցող՝ Թոխմախան գ'եօլ ջրամբարի վերանորոգման աշխատանքները և վերջացրել է։ Վերանորոգման աշխատանքների համար ծախսված է 43,000 ռուբլի։ Այդ գեօլը գտնուում է Երևանի հարաւ արևմտեան կողմում և ջուր է մատակարարելու այդ շրջանի հողերին։

ժ) ՍԵՒԱՆԱ ԼՃԻ ՋՈՒՐԸ.— Խորհրդային Հայաստանի կառավարությունը, բոլոր հնարաւոր միջոցները գործադրում է, որպէս զի աղգաբնակությանը ջուր մատակարարի և նրանց հնարաւորություն ընձեռնի անջրդի, գուցէ և անպէտք համարուած հողերը օգտագործելու համար։ Այդ նպատակով նա օգտագործում է նաև Սևանա լճի ջուրը, որով հնարաւորություն է ստեղծուում ոռոգելու 34,200 դեսեատին տարածություն։ Որպէս զի Սևանա լճի ջուրն շատ անդամ աննպատակ չ'հոսի, կամ երբեմն էլ չափից աւելի, որով տուժի լիճը, Զանգի գետի ակունքների մոտ դրված են շլուզներ և այդ գործի սարքաւորման հա-

մար ծախսված է 466,184 ռուբլի։

Այստեղ կանգ չենք առնում Սարդարբարդի մեծ ջրանցքի, Արազդայանի կալուածքի վերականգնման աշխատանքների, որը մօտ 10,000 դես. հող կ'տա Հայաստանին, Զամբլի ջրամբարի (Աբարանի շրջան) կառուցման և առհասարակ Հայաստանի ճահիճների չորացման վրա, որոնք հերթական խնդիրներ են և ստիճանաբար շինելու, կառուցելու և աշխատանքները իրականացնելու են, որոնց աւարտման համար Հայաստանի կառավարութիւնից պահանջելու է՝ ըստ նախահաշիների, 20,201,180 ռուբլի։

Խորհրդային գործիչները համոզված են, որ Հայաստանի բանուորներն ու գիւղացիները, առանց որև է կոչնակի օժանդակութեան կ'կարողանան այդ աշխատանքներն ի կատար ածել։ Մենք յաջողութիւն ցանկանալով հանդերձ, կ'ցանկանայինք, որ արտասահմանում ապրող հայութիւնն ի նկատի առնէր Հայաստանի աշխատաւորութեան բացառիկ դրութիւնն և իւր օգնութիւնն ընդլայնէր ու դրանով նպաստած լինէր վերոյիշեալ անյետաձգելի աշխատանքների աւարտմանը։

Բ) Համաշխարհային պատերազմի հետեանքով Հայաստանում մշակոյթային բոյսերի աճեցումը համարեա թէ դադար էր առել։ Խորհրդային կառավարութիւնը 1922 թ-ից սկսած, հաւաճային կարգով, սկսում է բամբակի մշակութեան գործը՝ Հայբամբակկոմի միջոցով, որը գտնւում է Հողժողկոմատին կից։ 1923 թ. կազմակերպւում է ռուս-հայկական պետական բամբակի ընկերութիւնը՝ «Գոսխլոը» և այդ թւականից սկսած բամբակի արդիւնաբերութիւնը ռացիոնալ հիմքերի վրա է դրւում։ Աշխատանքի սկսման չորս տարիների ընթացքում Գոսխլոի և Հայբամբակի գործունէութիւնը հետեւեալ պատկերն է ունեցել.

Թիւ	Քանի դեսեատին է ցանւել	Ո՞րքան վարկ է տրամադրւել	Ո՞րքան բերք է ստացւել	Բերքի ընդհանուր արժէքը ռ-ով.
1922	650	30,000	9,000	36,000 ռ.
1923	4,070	435 808	220,000	1,034,000
1924	13,928	820,610	673,263	3,163,769
1925	15,098	1,208,229	800,000	3,900,000
Ընդամենը	23,746	2,564,677	1,702,263	8,133,769

1926 թ-ի տեւեալները ձեռքի տակ չունենալու պատճառով չը կարողացանք մէջբերումներ անել, սակայն կարծում ենք, որ եղած աղիւսակը լիապէս պարզում է բամբակի մշակութեան առաջադիմութիւնը, որի համար մեր հայրենիքը մեծ ապագա է խոստանում։

Ցնտեսական բաժնի մէջ մենք այդ մասին արդէն խօսել ենք, այստեղ դիտաւորեալ, նորից շեշտելինք բամբակի մշակութեան խնդիրը, որպէսզի թւենք այն շինարարական աշխատանքները, որոնք կապւած են բամբակի մշակութեան հետ։ Այսպէս՝

1923 թ-ին № 1 բամբակազտիչ գործարանը հիմնական վերանորոգման ենթարկելու համար, ծախսւած է 16,000 ռուբլի։

Նոյն թւականին կառուցել է № 2 բամբակազտիչ գործարանը, որը սարքաւորութեամբ նստել է 170,000 ռուբլի։

1924 թ-ին Սարդարբարդում № 3 բամբակազտիչ գործարանի վրա ծախսւել է 280,000 ռուբլի։

1925 թ. կայանների բանուորական տանների, Արազդայանի Սերմատնտեսութեան և Երեւանի կենտրոնական տան կառուցումների համար յատկացւած է 607,000 ռուբլի։

1926 թ. շինարարական և տեխնիկական աշխատանքների համար լրացուցիչ նախահաշիւով յատկացւած է՝ ա) Ղամարլի № 4 բամբակազտիչ գործարանը կառուցանելու և սարքաւորելու համար՝ 300,000 ռուբլի։ բ) Արազդայանի սերմատնտեսութեան կից մի տուն կառուցանելու համար՝ 46, 840 ռուբլի։

գ) Ընթացիկ բարենորոգումների և լրացուցիչ կառուցումների համար՝ 22,000 ռուբլի։

դ) № 2 գործարանում ջրմուղ դնելու, հողամասի հարթում և նոր ճանապարհների կառուցում կատարելու համար՝ 30,000 ռ.

ե) № 2 գործարանի ընթացիկ վերանորոգման, էլէքտրոֆիկացիոն աշխատանքների և էլէքտրոմոտորների ու մամուլի սարքաւորման համար 45,800 ռուբլի։

զ) № 3 գործարանի ընթացիկ բարենորոգումների, նոր մեքենների սարքաւորման և այլ աշխատանքների համար՝ 27,500 ռուբլի։

է) № 1 գործարանի ընթացիկ վերանորոգման համար՝ 5,000 ռուբլի։

Այսպիսով տեսնում ենք, որ խորհրդային կառավարութիւնը ջանք չի խնայում բամբակի մշակութիւնն աւելի կանոնաւորելու համար, որը խոշոր նշանակութիւն ունի մեր երկրի տնտեսական կեանքի բարգաւաճման համար։

Տեսակները ցույց են տալիս, որ տարից տարի բամբակի բերքի ստացումն էլ աճելանում է։ Այսպես՝ 1922 թ. մկկ դեսեատինից միջին թվով բերք է ստացել 20 փութ հնդաւոր, 1923 թ.՝ 40 փութ, 1924 թ.՝ 48 փութ, իսկ 1925 թ.՝ 54 փութ։

Խորհրդային իշխանութիւնն ուշք է դարձրել նաև օճառի և ձիթհան գործարանների շինութեան վրա։ 1924 թուականին օճառի և իւղի գործարանների վրա ծախսել է 250,000 ռ. 1925 թ. ձիթհան և օճառի գործարանների սարքաւորման և մեքենայացման համար յատկացուած է 200,000 ռ. 1926 թ. ձիթհան գործարանին կից բանուորական մի տուն կառուցանելու համար, յատկացուած է է 51,139 ռուբլի։

Բամբակազտիչների, օճառի և ձիթհան գործարանների վրա ծախսուած է մօտաւորապէս երկու և կէսից մինչև երեք միլիոն ռուբլի։

Պարզ է, որ վերոյիշեալ աշխատանքներն ապագայում, աւելի զարգացնելու են, որոնք Հայաստանի տնտեսականին խոշոր յաւելումներ են տալու։

Գ) Շինարարութեան ասպարէզում խոշոր տեղ է գրաւում նաև էլէքտրօկայանների կառուցումը, որը նոյնպէս մեծ նշանակութիւն ունի մեր երկրի տնտեսական առաջադիմութեան համար։

Նախքան Հայաստանի խորհրդայնացումը, այնտեղ շատ քիչ էլէքտրօկայաններ կային, որոնք մատակարարում էին չնչին էներգիա։

Երևան քաղաքը, որը Հայաստանի կենտրոնն է, ունէր երկու ջրաէլէքտրօկայան։ Դրանցից մէկը Շուստովի սեփականութիւնն էր, որի ուժից օգտուում էին միայն յիշեալ անձի կոնեակ-գինու գործարանում։ Այժմ այդ գործարանը ընդարձակուած և անուանուած է «Արարատ»։ Իսկ միւս ջրաէլէքտրօկայանից օգտուում էր քաղաքը։

Յիշում ենք, 1920 թուի ամրանն էր, Հայաստանի Հանրապետութեան այն շրջանը, երբ Դաշնակցութեան Բիւրօն էր կառավարութիւնը, ներքին գործերի նախարար Աբրահամ Դիւլխանդանեանը հրամայեց, որ իւրաքանչիւր քաղաքացի իւր տան մուտքի մօտ կամ խանութի դռանն էլէքտրական լամպա ունենա։ Բացի փոքրիկ լամպաներից քաղաքի կենտրոնական փողոցներում և հրապարակներում մեծ լապտերներ էին վառում։ Երևանի ջրաէլէքտրակայանի ուժը չ՚բաւարարեց այդ նպատակի համար և այդ հրամանի իրականացմանը չ՚հետևեց, հենց ինքը ներքին գործոց պ. Նախարարը։

Խորհրդային կառավարութիւնն իւր վեց տարուա գոյութեան ընթացքում, ոչ միայն կանոնաւորել և ընդարձակել է եղած էլէքտրօկայաններն, այլ և նորերն ու խոշորներն է կառուցել։

Մեր հայրենիքը ջրային ուժ բաւականին ունի և նրանց մանրամասն ուսումնասիրութիւններն ապագայում հնարաւորութիւն կ՚տան էլի նոր էլէքտրօկայաններ կառուցանելու. եթէ կարիք լինի։ Խորհրդային Հայաստանի տնտեսխորհի ունեցած տեսակների համաձայն, երկրի ջրային ուժի ճիշտ օգտագործման դէպքում, կարելի է ստանալ 500-700,000 ձիու ուժի էներգիա։

Հայաստանում առայժմ գոյութիւն ունին հետեւեալ ջրաէլէքտրօկայանները։

1. Երևանի նոր շինուած էլէքտրօկայանը, որն ունի 5200 ձիու ուժ էներգիա։ Այս էլէքտրօկայանի էներգիան ոչ միայն բաւարար է Երևանի և շրջանի արդիւնաբերութեան էլէքտրականացման և առատ լուսաւորութեան համար, այլ և այդ էներգիայով մտադրութիւն կա ուժ տալ Այղր գետի ջրհան մեքենային և լուսաւորելու այդ ճանապարհի երկու կողմն ընկած գիւղերը։

3. Շիրջրանցքի մասին խօսելիս արդէն յիշատակեցինք Լենինականի էլէքտրօկայանը, որն ունի՝ 6000-7000 ձիու ուժ, որով օգտուելու է քաղաքը, մանածագործարանը և այլն։

3. Ստեփանաւանի էլէքտրօկայանը, որն ունի 1300 ձիու ուժ։

4. Իջևանի կայանը, որն օգտագործւում է նաև շրջանի համար և ունի 1200 ձիու ուժ։

5. Ղարաքիլիսայի կայանը, որն ունի 400 ձիու ուժ։

6. Նոր Բայազետի կայանը, որն ունի 250 ձիու ուժ։

7. Տեղական նշանակութիւն ունեցող էլէքտրօկայաններ են կառուցուած՝ Դարալագեազում, Մեղրիում, Դիլիջանի կայանը կանոնաւորուած է և այլն։

8. 1926 թուի ընթացքում ձեռնարկուած է Քեօլագերանի ուժեղ էլէքտրօկայանի կառուցմանը, որի էներգիան ապագայում կարելի է հասցնել մինչև 30,000 ձիու ուժի։

Եթէ Քեօլագերանի էլէքտրօկայանը հաշուենք 10,000 ձիու ուժանոց և տեղական նշանակութիւն ունեցող կայաններն էլ հաշուենք 50-100 ձիու ուժանոց, Հայաստանում գոյութիւն ունեցող էլէքտրօկայանների ուժը կ՚լինի մօտաւորապէս 25,000 ձիու ուժի հասնող էներգիա։

Էլէքտրօկայանների կառուցման համար ծախսուած է մօտաւորապէս 20,000,000 ռուբլի։

Ինչպէս վերևում ասացինք Հայաստանում, նախքան խորհրդային դառնալը շատ չնչին չափով էլէքտրօկայաններ կային, այն էլ

տեղական նշանակութիւն ունեցող, որոնց էներգիան միատեղ վերցրած 3 000 ձիու ուժի չէր հասնում։ Այստեղից պարզ է, թէ ինչ խոշոր աշխատանք է կատարուած այս ասպարիզում՝ Խորհրդային Հայաստանի գոյութեան վեց տարիների ընթացքում։

Ամբողջ էներգիան ներկայումս լիովին չի օգտագործւում, սակայն ժամանակի ընթացքում. ոչ միայն այդ ամբողջ էներգիան կօգտագործուի, այլ և նոր ելէքտրօկայաններ կ'կառուցուեն, որոնց համար բաւական աչալուրջ ջրային ուժ ունի մեր երկիրը՝ Խորհրդային Հայաստանը։

Դ. Մեր երկրի համար տնտեսական և այլ տեսակէտից խոշոր նշանակութիւն կունենա՝ Աղստաֆա- Իջևան- Դիլիջան- Ելենովկա-Երևան և Ելենովկա- Նոր-Բայազիդ երկաթուղագծերի կառուցումը, որի համար նախնական աշխատանքներ արդէն կատարւում են և ժամանակի ընթացքում գործնական աշխատանքներին կանցնեն։ Մեր կարծիքով այդ երկաթուղագիծը կ'լինի Խորհրդային Իշխանութեան գլուխ գործոցներից ամենախոշորը։

Երկաթուղու կառուցման աշխատանքների համար ծախս է նախատեսուած՝ մօտաւորապէս 40,000,000 ռուբլի։

Ե. Շինարարութեան ասպարիզում չմոռանանք յիշելու նաև Բանաքեռի ուժեղ ռադիո-կայանը, որը նոյնպէս խորհրդային Իշխանութեան օրօք է կառուցւել։ Ռադիո-կայաններ են կանգնեցուած նաև Գորիսում, Լենինականում և ուրիշ վայրերում։

Զ. Բնակարանային շինարարութիւնը նոյնպէս խոշոր տեղ է գրաւում Հայաստանում և այդ ուղղութեամբ բաւականին նուաճումներ կատարուած են։ Հայաստանի մայրաքաղաք Երևանը, որը ցարական Ռուսաստանի ժամանակ աչքաթող արուած մէկ ծայրամասի քաղաք էր հաշուում, բնակարանային շինարարութեան վրա առանձին հոգացում չէր արուած և այն հաղիւ բաւարարում էր 30—35,000 աղգաբնակութեան կարիքներին։ Երևանի շէնքերի մի մասը համաշխարհային պատերազմի հետևանքով այրուեցին, աւերուեցին և այսպիսով բնակելի տարածութիւնն աւելի ևս փոքրացաւ։ Երևանը մայրաքաղաք դառնալով, այնտեղ հաւաքուեցին պետական հիմնարկութիւնները, գործիչները, այնտեղ հաստատուեցին նաև Տաճկահայաստանից, Սուրմալուից և այլ վայրերից գաղթականների մի մասը։ Քաղաքի բնակելի շէնքերը պակասել, իսկ բնակիչների թիւը կրկնապատկուել ու եռապատկուել է։ Ըստ Երևանի կոմիտէի աւեալների, Երևանում կա 41,270 քառ. սաժէն բնակելի տարածութիւն, որից հիմնարկները բռնում են 3894 քառ. սաժէն, մնում է 37,376 քառ. սաժէն, որից իւրաքանչիւր շնչին 2,87 քառ. արշին տարածութիւն է

հասնում։ Նոյնպիսի կուտակումներ եղել են և Հայաստանի այլ քաղաքներում, երկրի փոքրանալու հայլ պատճառներով։ Դրանց հետևանքով էլ բնակարանային խնդիրը Հայաստանում մեծամեծ դժուարութիւնների հետ է կապուած։ Վերոգրեալ ցաւոտ հարցը լուծելու համար աշխատանքներ կատարուում են։ Թէ Երևանում և թէ Հայաստանի այլ քաղաքներում ու գիւղերում վերանորոգուում են բնակարանները և միաժամանակ նորերն են կառուցուում։ Երևանում, Աբովեան փողոցի վրա կառուցած է՝ հիւրանոցի համար մի մեծ շէնք։ Գաւգործկոմը շինել է հինգ հոսայարկ և քառայարկ շէնքեր։ Պետական հիմնարկների և մասնաւոր մարդկանց բնակութեան համար շինուած են բազմաթիւ շէնքեր։

Հանքերին և գործարաններին կից շինուած են բանուորական հանրակացարաններ։ Երևանում կառուցուած է «Համալսարանական» և «Հիւանդանոցային» քաղաքամասեր։

Համալսարանական քաղաքամասում շինուել և շինւում են՝ ա) Ուսանողական հանրակացարան, գիւղատնտեսական լաբորատորիա, ֆերմա, համալսարանի դասախօսների հանրակացարան, բակտերիոլոգիական ինստիտուտ և անատոմիկումի շէնքերը։ Նոյն ձևով աշխատանքներ են կատարւում և հիւանդանոցային քաղաքամասում և այլուր։

Խորհրդային Հայաստանի գոյութեան վեց տարիների ընթացքում նորոգուած և շինուած են նաև բազմաթիւ դպրոցական շէնքեր և այլն։

*** Մենք դիտմամբ աւելի երկարօրէն կանգ առանք մեր երկրի շինարարութեան վրա, որովհետև շինարարութեան կարիքը մեր հայրենիքի համար աւելի մեծ է և այդ շինարութեան շնորհիւ է ծաղկելու և զարգանալու նաև մեր երկրի տնտեսական և կուլտուրական կեանքը։

Է.

ԿՕՕՊԵՐԱՏԻՎ ԿԵԱՆՔ.

Կօօպերատիւ կեանքը նոյնպէս մեծ նշանակութիւն ունի մեր երկրի համար, այդ պատճառով էլ շինարարութիւնից անմիջապէս յետո տեղ ենք տալիս կօօպերատիւ կեանքին, որպէս տնտեսական ճիւղի մէկ լրացուցիչ մասը։

Կօօպերատիւ աշխատանքը մեր երկրում ուշ սկսուեց։ Պատերազմի նախընթաց տարիներում էր, որ հիմք դրուեց՝ Հայաստանի կօօպերատիւների Միութեանը՝ Հայկօօպ-ին։ Հայկօօպի ճիւղեր բացուել էին միայն գլխաւոր կենտրոններում. օր. Վաղարշապատում, Վանաձորում, Իգդիրում և այլ սրանց նման աչքի ընկնող վայրերում։ Մեր երկրում ուշք էր դարձուում գլխաւորապէս սպառողական կօօպերատիւնե-

րի և վարկային (մանր) ընկերութիւնների վրա, իսկ արտադրական կոօպերատիւը դեռ տեղ չունէր, եթէ ի նկատի չունենանք մի քանի կաթնատնտեսական արտելները։

Համաշխարհային պատերազմի ընթացքում սպառողական կոօպերատիւների թիւն աւելի բազմացաւ, որովհետև պատերազմի հետևանքով ապրանքների ներմուծումը դժուարացել էր, եթէ չասենք անհնարին էր դարձել և այդ պատճառով էլ ամենուրեք աշխատում էին կոօպերատիւի ճիւղեր բանալ։

Հանրապետական Հայաստանի ժամանակ, բացի Հայկոօպից և նրա ճիւղերից, գործում էին Երևանում քաղաքային ինքնավարութեան բացած կոօպերատիւները, իսկ Հայաստանի գլխաւոր կենտրոններում՝ Երևան, Լենինական (Ալէքսանդրապոլ), Ղարս, Ջալալօղլի, Ղարաքիլիսա, Դիլիջան և այլն վայրերում գործունէութիւն էին սկսել՝ Պետական ծառայողների Պրոֆեսիոնալ Միութեան Խորհրդի ձեռնարկած «Աշխատաւոր» անունով կոօպերատիւները։ Այս վերջին կոօպերատիւները նպատակ էին դրել՝ մթերքներով բաւարարել՝ պետական ծառայողներին և բանւորներին, իսկ այդ նպատակին հասնելու համար, կոօպերատիւները կառավարական պահեստներից ապրանքը ստանում և բաշխում էին իրենց անդամներին։ «Աշխատաւոր» կոօպերատիւները, այլ խօսքով մթերքների բաշխման միջոցներ էին հանդիսանում՝ կառավարութեան և պետական ծառայողների միջև։ Կառավարութիւնից բացի, Հայկոօպն էր միայն, որ աշխատում էր դրսի աշխարհի հետ կապ ստեղծել և իւր անդամներին անհրաժեշտ մթերքներով բաւարարել։

Պարզ է, որ յիշատակուած շրջանում կոօպերատիւ կեանքը թոյլ էր կազմակերպուած և այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև պատերազմի և ներքին կռիւների հետևանքով, մեր երկիրն անընդատ պայմանների մէջ էր գտնւում։

Հայաստանի խորհրդայնացումից յետո, յատուկ ուշադրութիւն է դարձել կոօպերատիւ կեանքի զարգացման վրա։ Եւ դա բնական է, քանի որ երկրի զեկավարների աշխարհայեացքն էլ այդպէս է թելադրում։

Խորհրդային Հայաստանում էլ իւր գործունէութիւնը շարունակում է Հայկոօպը, բացի դրանից, այնտեղ բացուած են «Բանկոօպներ» (բանւորական կոօպերատիւներ) և «Գիւղկոօպ»-ներ (գիւղատնտեսական կոօպերատիւներ)։

Խորհրդային Հայաստանում, սպառողական կոօպերատիւներին զուգընթաց, ուժ է տրւում նաև արտադրական կոօպերատիւներին։

Հայաստանի խորհրդայնացումն ընդամենը վեց տարուա պատմութիւն ունի, ուստի և տեղի աղգաբնակութիւնը դեռ լիովին չի իւրացրել տիրող իրաւակարգի ոգին ու բնոյթն և այդ պատճառով էլ, ժողովրդի մեծ մասը կոօպերատիւներին չէ անդամագրուած։ Սա ի հարկէ ժամանակի խնդիր է միայն. ստիպմանարար կոօպերատիւներին պէտք է անդամակցի ամբողջ աղգաբնակութիւնը։ Ստորև բերուած վիճակագրական տեսակներն էլ ցոյց կտան, որ կոօպերատիւները տարեց տարի աւելի են աշխուժանում, ճիւղաւորւում և նրանց անդամների թիւն էլ բազմանում է։

Ա.

Հայկոօպին անդամագրուած կոօպերատիւներն են ա) 2 հատ «Բանկոօպ» Երևանում և Լենինականում։

Բ.

5 հատ խառը պետ. կոօպերատիւներ՝ Դիլիջանում, Վաղարշապատում, Ղարաքիլիսայում, Գորիսում և Նոր-Բայազետում։

Գ.

Գիւղական կոօպերատիւներ, որոնց թիւը 63-է։ Ընդամենը «Հայկոօպին անդամագրուած են 70 կոօպերատիւներ, որոնք ըստ գաւառների հետևեալ պատկերն են ներկայացնում՝

Գաւառները	Կոօպերատիւներ	Ճեռնարկներ	Անդամների թիւը
Երևան	15	85	13201
Լենինական	8	31	52601
Էջմիածին	6	33	6917
Նոր-Բայազետ	5	16	2043
Լոռի-Փամբակ	17	37	5251
Դիլիջան	10	38	4244
Զանգեզուր	5	24	3891
Դարալագեազ	3	14	1570
Մեղրի	1	4	467
Գումարն է	70	282	42,845

Որպէս զի ընթերցողների համար պարզ լինի թէ աճումն ինչպէս է կատարուել, այստեղ մէջ ենք բերում 1925 թ. առաջին վեց ամիսների աղիւսակը.

Ամիսներ	Ձեռնարկներ	Անդամների թիւը	Ամիսներ	Ձեռնարկներ	Անդամների թիւը
Յունուար	223	35,485	Ապրիլ	264	40,140
Փետրուար	245	37,567	Մայիս	270	41,833
Մարտ	259	38,721	Յունիս	282	42,845

Ինչպէս ընթերցողները կ'տեսնեն, կօոպերատիւ ձեռնարկների աճումը կատարուում է ամսէ-ամիս, իսկ մեր բերած տուեալները վերաբերում են 1925 թ. առաջին վեց ամսին։ Եթէ նոյն համեմատութեամբ առաջանալու լինենք մինչև 1926 թ. վերջը, պարզ է որ կօոպերատիւների, ձեռնարկների և նրանց անդամակցողների թիւը թերևս կրկնապատկուած կ'լինի։ Պէտք է նկատի առնել նաև այն, որ կօոպերատիւ ցանցը տարածուած է Հայաստանի բոլոր գաւառներում։

Բացի «Հայկօոպից» անդամակցողներից, Հայաստանում գործում են նաև՝ 1. ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿՕՕՊԵՐԱՏԻՆԵՐ, որոնք Անդկովկասեան երկաթուղային կենտրոնի ճիւղն են կազմում, և Լենինականում ունին 4 խանութ. բաժանմունքներ ունին զաղազան կայարաններում, նաև գծի վրա երթևեկում են մի քանի վագոն-խանութներ։ Երկաթուղային կօոպերատիւը Հայաստանում ունի 2400 անդամ։

2. «ԲՈՅԵՑ» (մարտիկ).— Գործում է սահմանային զօրքի համար. միայն Լենինականում ունի 5 խանութ և մէկ ճաշարան։

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՕՕՊԵՐԱՏԻՆԵՐ.—

Ուսանողներին և աշակերտութեանը գրենական պիտոյքներ մատակարարելու համար, Հայաստանի թէ կենտրոնական քաղաքներում՝ Երևան, Լենինական և թէ այլ վայրերում բացել են զպրոցական կօոպերատիւներ։ Այդպիսի կօոպերատիւների թիւը 1925 թ. եղել է 87, որոնց անդամների թիւն եղել է 4957։

Բ. 1924 թ-ին Հայաստանում ձեռնարկել են գիւղատնտեսական կօոպերատիւների կազմակերպմանը։ Տնտեսական բաժնի մէջ խօսելիս մենք ասացինք, որ Հայաստանը գլխաւորապէս երկրագործական է։ Գիւղատնտեսական երկիր է։ Գիւղատնտեսական

կօոպերատիւները մեր երկրում աւելի տարած ունին։ Ստորև բերուած աւեալներից ընթերցողները կ'համոզուեն՝ մեր ասածների ճշտութեան մէջ։

1924 թ. մարտի 15-ին Հայաստանում գոյութիւն են ունեցել 13 գիւղատնտեսական կօոպերատիւներ, որոնք ընդգրկել են՝ 1384 տնտեսութիւն։

1925 թ. յունուար 1-ին եղել են 87 կօոպերատիւ՝ 10 363 տն.։

1926 թ. յունուարի 1-ին՝ 156 կօոպ. 21,342 տնտես.։

1926 թ. յունիսի 1-ին՝ 197 կօոպ., 27,535 տնտեսութեամբ։

Կարծում ենք, որ առանձին բացատրութիւնների կարիք չ'կա, քանի որ թուական տուեալները լիապէս պարզում են այն աճումն ու ծաւալումը, որ ունեցել են գիւղատնտեսական կօոպերատիւները երկու տարուա ընթացքում։ Մենք չենք կասկածում, որ նոյն թափով էլ աճումը շարունակելու է։

Մինչև 1926 թ. յունիսի 1-ը, գիւղատնտեսական կօոպերացիան հետևեալ մասնագիտական ճիւղերն է ընդգրկել.

	Դիսպատին	Ամբողջի որ տոկոսն է կազմում.
ա) Բամբակի ցանքսեր	6000	45
բ) Խաղողի և պղպտու այգի	2800	33
գ) Ծխախոտի ցանքսեր	300	95
դ) Կաթնատու կովեր	18,652 գլուխ	կովերի՝ 11
ե) Մեղուաբուծութիւն	8,803 փեթ.	16

Գիւղատնտեսական կօոպերատիւն, իւր ճիւղերով նորոգումների, կառուցուածքների, ինվենտարի և այլ ծախսերի համար վարկ է ստացել՝

1. Գիւղբանկից՝	775,450 ռ.
2. Հայբամբակկոմից՝	300, հազ. »
3. Հայգիւղկօոպից՝	320,600 »
Ընդամենը՝	1,396,050 ռ.

Վերոյիշեալ գիւղատնտեսական կօոպերատիւներն իրենց ընդգրկած ճիւղերով հետևեալ արդիւնքն են ունեցել՝

Մթերքների տեսակները	1925 թ.		1926 թ.	
	Փութ	Ռուբլի	Փութ.	Ռուբլի
Շեկ. պանիր	12,000	360,000	15, հազար	450, հազ
Թուշի պանիր	10,000	150000	20, »	300, »
Իւղ	2,000	70,000	5, »	170, »
Գինի	60,000 վեդ.	240,000	140, » վեդրո	420, »
Օղի	150,000 աստ.	45,000	300, » աստ.	90, »
Սպիրտ	160,000 »	64,000	300, » »	90, »
Բամբակ	130,000 փ.	650,000	300, » փ.	1,500, »
Բոժոժ	1,000 »	72,000	2, » »	200, »
Շերամի հունդ	26,000 տ.	57,000	60, » տ.	250, »
Զոր և թարմ մրգ	3 000 փ.	12,000	7, » փ.	35, »
Պահածո մրգեր	7,000 »	42,000	35, »	245, »
Բրինձ	7,000	42,000	10, »	60, »
Ծխախոտ	4,000	60,000	15, »	300, »
Զու	100,000 հատ	5,000	3 միլիոն հատ	75, »
Մեղր	500 փ.	8,000	4, հազ. փ.	64, »
Խոտ	—	—	100, » »	60, »
Մա[illegible]	—	—	4, » հատ	60, »
Բուրդ	—	—	4, » փ.	60, »
Կաթ	10,000 փ.	30,000	40, » փ.	120, »

Այսպիսով 1925 թվի ընդհանուր արդիւնքի գումարն է՝ 1,907,հազ. ռ ; իսկ 1926 թվին սպասւած արդիւնքի գումարը նախատեսնւած է՝ 4,864,հազ. ռ.։

Գիւղատնտեսական կօոպերացիան երկրի զանազան մասերում ունի՝ պանրի, պահածոյի (կոնսերվ), կղմինտրի, կոնեակի, մետաքսի և այլ գործարաններ, գինու պահեստներ, մոմաթերթի, վուշի մշակման արհեստանոցներ և այլ ձեռնարկութիւններ, որոնք բոլորն էլ նպաստում

են ժողովրդի տնտեսութեան բարձրացմանը և նրա ձեռք բերած արդիւնքների վաճառահանմանը։

Դ. ՄԵՂԻԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՕՕՊԵՐԱՏԻՒՆԵՐ.— Խորհրդային Հայաստանում կեանք են առել և գործում են մեղւաբուծական կօոպերատիւներ, որոնք նպատակ ունին Հայաստանում զարգացնելու մեղւաբուծութիւնը, իսկ միւս կողմից էլ նպաստելու մեղւաբուծութեան արդիւնքների վաճառմանը։

Մեղւաբուծական կօոպերատիւներ գոյութիւն ունին՝ Երևանի, Էջմիածնի, Նոր-Բայազեդի, Լօռի-Փամբակի, Դիլիջանի, Զանգեզուրի և Դարալագեազի գաւառներում։

Դ. ՎԱՐԿԱՅԻՆ ԿՕՕՊԵՐԱՏԻՒՆԵՐ.— Խորհրդային Հայաստանի բոլոր գաւառներումն էլ կան և գործում են՝ գիւղավարկային կօոպերատիւներ, որոնց պատկերը 1925 թվին հետևեալն էր՝

Գաւառներ	Ընկ. թիւը	Անդամների թիւը	Դրամագլ. ռուբլիներով: Բաժնային	Հիմնական	Գումար
Երևան	5	2,759	29,481	4,623	34,104
Լենինական	4	1,464	7,339	2,804	10,143
Էջմիածին	4	2,086	22,933	4,870	27,803
Նոր-Բայազեդ	4	1,322	7,006	7,399	14,405
Լօռի-Փամբակ	2	706	7,120	2,694	9,814
Դիլիջան	4	833	5,815	647	6,462
Զանգեզուր	3	447	2,682	321	3,003
Դարալագեազ	1	324	2,415	162	2,577
Մեղրի	1	392	3,346	3,121	6,467
Գումարն է	28	10,332	88,137	26,641	114,778

Մեր երկրում, առայժմ, վարկային կօոպերատիւները նոյնպէս ծաւալեալու հնարաւորութիւններ ունին և ծաւալւում են։

Ե. Բացի վերևում յիշատակւած կօոպերատիւներից, Հայաստանում գոյութիւն ունին նաև՝ ա) այգեգործական կօոպերատիւներ,

ը) ծխախոտագործական կооպերատիւներ, գ) ընակարանային կооպերատիւներ և այլն։ Այս կооպերատիւները համեմատաբար փոքր շրջանակներ են ընդգրկում։ Գլխաւոր գործունէութիւնը կենտրոնացած է՝ Հայկооպի և գիւղատնտեսական կооպերատիւների ձեռքում, որոնց հաւանականաբար կ'միանան և վերջինները։

Զ. Կооպերատիւներից զատ, սակայն կооպերատիւ ընոյթ կրող մի շարք ընկերութիւններ և արտելներ կան Հայաստանում։ Այդ շարքին են պատկանում՝ Տնայնագործների ընկերութիւնը, Շերամապահների ընկ., Աշխատաւորական հողօգտագործման ընկ., Տնայնագործական արտելներ, որոնց մէջ մտնում են՝ հիւսներ, ներկարարներ, հիւսուածագործներ, դերձակներ, և այլն։ Աշխատանքի արտելներ, Սպառում կազմակերպող արտելներ, Հաշմանդամների արտելներ և Կաթնատնտեսական արտելներ։ Բոլոր ընկերութիւնների և արտելների նպատակն մէկ է՝ օգնել իրենց անդամներին՝ աշխատանքի բարձրացման, աշխատանքի արդիւնքի սպառման, վարկային և այլ օժանդակութիւններով։ Վերևում թւած ընկերութիւններից և արտելներից ամենածաւալունն է՝ կաթնատնտեսական արտելը։ 1925 թ-ին, Հայաստանում, կաթնատնտեսական արտելների տարածումը հետևեալ պատկերն ունէր։

Գաւառներ	Արտելների թիւը	Անդամների-ը	Գաւառներ	Արտելների թիւը	Անդամների-ը
Երևան	1	27	Լոռի-Փամ.	44	3,890
Լենինակ.	8	466	Դիլիջան	9	468
Նոր Բայազ	3	94	Զանգեզուր	4	189
Ընդամենը	12	587	Ընդամենը	57	4,547

Կարծում ենք, որ վերոյիշեալ ընկերութիւններն ու արտելները նոյնպէս Գիւղատնտեսական կооպերատիւի մասը պէտք է կազմեն ժամանակի ընթացքում և դրանով աւելի զարկ կտան, իրենց գործունէութեանը։

Եղած տեսակների համաձայն, սպառողական կооպերատիւներին անդամակցում է Հայաստանի աղքաբնակութեան 38 տոկոսը, իսկ արտադրողական կооպերատիւներին մասնակցում է աղքաբնակութեան 18 տոկոսը միայն։

Ինչպէս ընթերցողները կ'տեսնեն, կооպերացման ասպարիզում նոյնպէս, Խորհրդային Հայաստանի գործիչներն ու վարիչները ջանք

չեն խնայում, որի ընդհանուր արդիւնքը ծառայում է Հայաստանի աղքաբնակութեան տնտեսական և շինարար աշխատանքների զարգացմանը։

Է. Այսուհետև յիշենք նաև Հայաստանի Կոմունալ բանկի մասին և կооպերատիւների առթիւ մեր խօսքը սահմանափակենք։

Հայաստանի Կոմունալ բանկը հիմնուել է 1924 թ-ի մարտ ամսին՝ 300,000 ռուբլի հիմնադրամով, որը մէկ տարուա գործունէութեան ընթացքում 1925 թ. ապրիլ ամսին հասցրած է մէկ միլիոն ռուբլու։

Բանկն իր վարկաւորումը կատարել է կարճատև և երկարատև ժամկէտներով, ապրանքային փոխառութիւնների և այլ ձևերով։

1924-25 հաշուետու տարուա վերջին, նրա կատարած փոխառութիւնները հետևեալ պատկերն է ներկայացնում՝

1. Պետական առևտրին՝	1,612,000 ռ.	35,7. տոկոս
2. Կооպերացիային	880,000 »	19.7. տոկոս
3. Պետ. արդիւնաբերութեան	848,000 »	18,8. տոկոս
4. Վարկային հաստատութիւններին	208,000 »	4,6. տոկոս
5. Պետական հիմնարկներին	635,000 »	14,1. տոկոս
6. Հասարակակ. կազմակերպութ.	156,000 »	3,4. տոկոս
7. Մասնաւորներին	167,000 »	3,7. տոկոս
Ընդամենը	4,512,000 ռ.	100 տոկոս։

Ուրեմն նա վարկաւորել է 4,512,000 ռուբլով, իսկ իր ընդհանուր շրջանառութիւնը հասցրել է մօտ 39,103,000 ռուբլու։

Բացի վերոգրեալից բանկն երկարատև փոխառութիւններ է արել՝ 1) Պետ. հիմնարկութիւններին՝ 180,000 ռ. 2) Հասարակական հաստատութիւններին— 57,000 ռ. և 3) Պետ-արդիւնաբերութեանը՝ 12,000 ռուբլի։

Երկարատև փոխառութիւնների գումարն է 238,000 ռուբլի։

1924-25 հաշուետու տարուա ընթացքում բանկը ներմուծել է 280 վագոն շինարարական տախտակեղէն, 80 վագոն ցեմենտ, 5 վագոն թիթեղ, 4 վագոն մեխ և այլն, որոնց վաճառումն որոշ չափով ուժեղացրել է նրա շրջանառութեան միջոցները։

Ի հարկէ բանկի գործունէութեան ժամանակամիջոցը շատ կարճ է, սակայն կատարուած վարկաւորումները ցոյց են տալիս, որ նրա գործունէութիւնը մեր երկրի տնտեսական և շինարարական կեանքի համար խոշոր նշանակութիւն է ունենալու։

** Այսպիսով, ինչպէս հնարաւորութեան սահմաններում, մեր ընթերցողներին ամփոփ կերպով առաջադրեցինք Խորհրդային Հայաստանի տնտեսական վիճակն և վեց տարուա ընթացքում այնտեղ կա-

ապրած շինարար աշխատանքների պատկերն և կօօպերատիւ վիճակը։

Տնտեսական և շինարարական կեանքի բնորոշման համար վերոգրեալ տուեալները բաւարար համարելով, անցնում ենք Խորհրդային Հայաստանի կրթական կեանքին վերաբերող հարցերի քննութեանը։

Ը.

ԿՐԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ.

Հայաստանում (այժմեան) կրթական վիճակը, նախքան երկրի խորհրդային դառնալը, շատ անմխիթար վիճակում էր գտնւում։ Ցարական Ռուսաստանը, որն անշեղօրէն ռուսացման քաղաքականութեանն էր հետեւում, ամեն կերպ աշխատում էր արգիլք հանդիսանալ մայրենի լեզուով գոյութիւն ունեցող դպրոցներին։

Եթէ շատ հեռու անցեալն ի նկատի չառնենք, երբ մի քանի անգամ փակման են ենթարկւել հայկական դպրոցները, Խորհրդայնացման նախօրեակի տարիներում կատարւած փաստերն էլ բաւական կըլինեն, մեր ընթերցողներին համոզելու՝ ցարական Ռուսաստանի ռուսացման քաղաքականութեան այլանդակութիւնների մէջ։

Ընթերցողներն անշուշտ լաւատեղեակ են, որ ցարական Ռուսաստանի ժամանակ, հայ եկեղեցին իրաւունք ունէր հայկական գիւղերում և քաղաքներում «եկեղեցական-ծխական» դպրոցներ բանալու։ Այդ դպրոցները պահպանւում էին՝ թոշակներով, համայնքի նուիրաբերութիւններով, ապա դպրոցական վարչութիւնների կազմակերպած՝ ցերեկոյթ-ներկայացումներով և իւրաքանչիւր վայրի եկեղեցու տւած օժանդակութեամբ։ Մի խօսքով «եկեղեցական-ծխական» դպրոցները պահւում էի միայն և միմիայն համայնքի միջոցներով, քանի որ վերևում մեր թւած բոլոր աղբիւրներին ջուր տւողը միևնոյն համայնքն էր լինում։ Եւ ի պատիւ մեր համայնքների և դպրոցական գործի ղեկավարների պէտք է ասենք, որ «եկեղեցական-ծխական» դպրոցները կարողանում էին իրենց գոյութիւնը պահպանել։

Այսպիսի միջոցներով պահպանւող դպրոցների դէմ պայքարի էր դուրս եկել՝ ցարական Ռուսաստանը, յանձինս իւր Կովկասեան պաշտօնեաների։ Այդ պաշտօնեաներից մէկը՝ Կովկասեան դպրոցների հոգաբարձու պ. Ռուդոլֆը, ներկայումս գտնւում է Թաւրիզում և ղեկավարում է՝ դաշնակցականների ձեռքով բացւած՝ ռուսական գիմնազիան։

Ցարական Ռուսաստանի պաշտօնէութիւնն, այն կենտրոնական վայրերում, ուր կային «եկեղեցական-ծխական» դպրոցներ և պահպանւում էին ըստ ամենայնի բարւոք վիճակում, աշխատում էր ռուսական դպրոց բանալ, որպէսզի դրանով հարւածէ հայ դպրոցին։ Բացի կենտրոնական վայրերից ռուսական դպրոցներ էին բանում նաև այնպիսի

վայրերում, ուր ժողովուրդն ի վիճակի չէր լինում հայկական դպրոց բանալու։

Ռուսական դպրոցների ամբողջ ծախսը, ուսուցիչների վարձատրութիւնն և այլն, հոգում էր պետական գանձարանը։ Ռուսական դպրոցներում պաշտօնավարող ուսուցիչները, ցարական պաշտօնեաներ էին համարւում։ Սկզբնական շրջանում, այդ դպրոցներում սովորող աշակերտութիւնից ուսումնավարձ չէին վերցնում։ Ցիշեալ դպրոցներում բոլոր առարկաները, բացի հայոց լեզուից և կրօնից, որոնց իւրաքանչիւր բաժանմունքում շաբաթական երկու-ական դաս էր յատկացւում, մնացած՝ ծրագրում գոյութիւն ունեցող բոլոր առարկաները՝ դասաւանդւում էին ռուսերէն լեզուով։

Դպրոց մտած առաջին բաժանմունքի երեխաներից, որոնք նոր էին ռուսերէն լսում, պահանջւում էր ռուսաց լեզուով խօսել։ Եւ որպէս զի կարողանային ծնողների տրամադրութիւնը շահել, հինգերորդ բաժանմունք վերջացնող երեխաներից ոմանց պաշտօն էին տալիս՝ ռուսական հիմնարկութիւնների մէջ։ Պարզ է, որ այս վերջին միջոցը ծնողներից ոմանց շլացնում էր և ասում էին. «այս ինչի տղան չինովնիկ (պաշտօնեա) դարձաւ» ու աշխատում էին, որ իրենց երեխաներն էլ «չինովնիկ» դառնան։

Ջնայելով պայքարի վերոգրեալ ձևերին, հայ ժողովուրդը սիրում էր իւր «եկեղեցական-ծխական» դպրոցներն, ուր իրենց երեխաները մայրենի լեզուով կրթութիւն ու դաստիարակութիւն էին ստանում։

Ի հարկէ այդպիսի մայրենի դպրոցների թիւը, մեր միջավայրի հետ համեմատած չնչին էր և այնպիսի գիւղերումն էին պահպանւում, ուր ժողովուրդն ի վիճակի էր լինում այդպիսի դպրոցների ծախքերը հոգալու։

Մեր գիւղերում եղան դէպքեր, երբ ժողովուրդը համախօսական վճռով որոշեց՝ փակել «եկեղեցական-ծխական» դպրոցը և փոխարէնը պետական դպրոցներ բացեցին, որովհետև միաժամանակ երկու դպրոց չէին կարողանում պահել։ Եղան և այնպիսի գիւղեր, որոնք չ'նայելով դրծադրւած բոլոր միջոցներին, պետական դպրոց չբացեցին։ Սակայն եղան և այնպիսի գիւղեր, որոնք առաջ գոցեցին «եկեղեցական-ծխական» դպրոցներն ու նրանց տեղ պետական դպրոցներ բացեցին, բայց կարճ ժամանակից յետո, կրկին համոզւելով, որ իրենց երեխաների կրթութիւնը մայրենի լեզուով աւելի լաւ էր ընթանում, համախօսական վճռով, չ'նայած բոլոր արգելքներին, փակեցին պետական դպրոցը և նորից «եկեղեցական-ծխական» դպրոց բացեցին։ Այդպէս վարւեց՝ Ղամարլի շրջանի Աղբաշ գիւղը 1916 թւին և այլն։

Հանրապետական շրջանում, Հայաստանում գոյություն ունեցող բոլոր պետական դպրոցներն ազգայնացրեցին։ Տարրական դպրոցներն ազգայնացրեցին հենց սկզբի տարում, իսկ միջնակարգ դպրոցների բարձր դասարանները դեռ լիովին չէին ազգայնացրած, երբ Հայաստանը խորհրդային դարձավ։ Հայաստանի Հանրապետության ժամանակ, բացի գոյություն ունեցող «եկեղեցական-ծխական» դպրոցներից, որոնց գեկավարությունն իր վրա վերցրեց կառավարությունն և պետական տարրական դպրոցների ազգայնացնելուց, հայ գիւղերում նոր տարրական դպրոցներ՝ այնքան չնչին քանակությամբ բացեցին, որ կարելի է ասել, բոլորովին չեն բացել։ Մի քանի հատ միջնակարգ դպրոցների հիմք դրեց միայն։ Այսպես Աշտարակում գոյություն ունեցող պետական բարձր տարրական դպրոցն ազգայնացրեց և անուանեց՝ Աշտարակի գիմնազիա։ Վաղարշապատում և Դիլիջանում նոր գիմնազիաների հիմք դրեց (միջնակարգ դպրոց), բայց դեռ լիապես միջնակարգի բոլոր դասարանները չունեին, երբ երկիրը խորհրդայնացավ։ Հայաստանի Հանրապետության ժամանակ, 1919 թվի յունվարին, Ալեքսանդրապոլում՝ Առևտրական դպրոցի շենքում, բացեց Հայաստանի Համալսարանը, որը յաջորդ ուսումնական տարեշրջանում Երևան տեղափոխեց։ Համալսարանի, ինչպես ասացինք նոր բացման շրջանն էր, հետևապես կազմակերպչական շրջանը։ Այն աւելի շատ մեր Եջմիածնի վանքին կից գոյություն ունեցող Ճեմարանի լսարաններն էր յանձնում, ուրիշ ոչինչ։ Գոյություն ունէին միայն պատմական և լեզուաբանական ֆակուլտետները։ Հանրապետականան շրջանում դպրոցական ինտենսիւ աշխատանք գոյություն չունէր, որովհետև երկիրը խաղաղ պայմաններում չէր գտնուում, որպիսի դրությունը մեծապես աղդում էր նաև կրթական կեանքի առաջադիմության վրա։

Ահա այսպիսի վիճակում էր գտնուում Հայաստանի կրթական կեանքը, երբ երկիրը խորհրդային դարձաւ։

Հայաստանի խորհրդայնացման սկզբի շրջանում, որի մասին վերևում խօսել ենք, կրթական կեանքի մէջ առանձին փոփոխություն՝ քանակի տեսակէտից, չմտաւ. սակայն կազմակերպչական տեսակէտից փոփոխություն կատարեց։ Այսպես. Լուսժողկոմատի հրահանգի համաձայն դպրոցները երկու մասի բաժանեցին՝ Ա. (առաջին) աստիճանի դպրոցներ, որոնց մէջ մտնում էին բաժանմունքները (ա, բ և գ) և 1, 2 և 3 դասարանները, իսկ 4, 5, 6, 7 և 8-րդ դասարանները կոչեցին Բ. (երկրորդ) աստիճանի դպրոցներ։

Առաջին աստիճանի դպրոցներում, բացի 3-րդ դասարանից, մուծված էր դասարանական սիստեմը՝ ամեն մէկ բաժանմունք կամ դասարան յանձնված էր մէկ դասատուի։ Երկրորդ աստիճանի դպրոցներում շարունակւում էր առարկայական սիստեմը։ Բոլոր դասարանները (բարձր) լիապէս ազգայնացրեցին։ Դպրոցների վարչական կազմի մէջ նոյնպէս փոփոխություն մտաւ։ Գոյություն ունեցող վերատեսուչների ու տեսուչների պաշտօնները վերացուցին և դրանց փոխարէն հաստատեցին դպրոցական խորհուրդներ, որոնք ընտրւում էին Մանկավարժական Խորհրդի կողմից՝ նախագահ, օգնական (կամ օգնականներ, եթէ դպրոցը մեծ էր) և քարտուղար (կամ քարտուղարներ)։ Բացի կազմակերպչական այս փոփոխություններից, Լուսժողկոմատն ունէր յատուկ հրահանգիչները, որոնք շրջում էին դպրոցները, կապ էին պահում Լուսժողկոմատի հետ և կարիք եղած դէպքում անհրաժեշտ ցուցմունքներ էին տալիս։ Նոր ուսուցիչներ հրաւիրելու հարցը վերապահուած էր դպրոցական խորհուրդներին։

Մինչև 1921 թվի փետրուարեան ապստամբությունը, որի մասին ժամանակին խօսել ենք, Երևանում տեղի ունեցաւ մէկ ուսուցչական համագումար, ուր ի միջի այլ խնդիրների, Հայաստանում ներկայումս գործ ածւող նոր ուղղագրության մասին զեկուցեց պ. Մանուկ Աբեղեանը։ Այդ նոր ուղղագրության մասին տաք վիճաբանություն տեղի ունեցաւ. դէմ արտայայտողների մէջ էին՝ Գ. Էդիլեան, Ա. Թիւն տեղի ունեցաւ. դէմ արտայայտողների մէջ էին՝ Գ. Էդիլեան, Ա. Շաւարշեան, Բ. Բանաթրեան, Գր. Ղափանցեան, Տ Ռաշմաճեան, Ս. Սարգսեան և այլն և այլն։ Մի խօսքով ուսուցչական համագումարը նոր ուղղագրության կիրառման վերաբերմամբ, խոշոր մեծամասնությամբ, դէմ արտայայտեց և այն չընդունեց։

Մեծամասնականները, ապստամբությունը ճնշելուց յետո, կրկին գործի գլուխ անցնելով, վարչական կարգով, նոր ուղղագրության ընդունման մասին դեկրետ հրատարակեցին և նրա կիրառումը պարտադրեցին։ Այստեղ մեր նպատակից դուրս է՝ նոր ուղղագրության թերի և առաւել կողմերը քննության առնելը, միայն հարկ ենք համարում ասելու, որ նոր ուղղագրությունն երկրի հաւաք և մեր լեզուի համաձայնությամբ հետևանք չունեցաւ, այլ եթէ կուզէք մի շարք տեսակէտներից այն վնասակար ազդեցություն ունեցաւ, մանաւորապէս գաղութահայ շրջանակներում։ Նոր ուղղագրության վերաքննության և վերամշակման խնդիրն կրկին հրապարակի վրա է դրված և Խորհրդային Հայաստանում կազմված է Ցանձնաժողով, որը ներսի և դրսի հայագէտների, գրականագէտների ու այլ վեց տարբա ընթաց-

քում նոր ուղղություններ դործադրող և ուսուցանող ուսուցչության կարծիքներն իմանալուց յետո, հարկաւոր փոփոխություններն և լրացումները կ'կատարի և հայ ժողովրդին մի նոր և ընդունելի ուղղություն կ'հրամցնի։

Ա. Ժողովրդական կրթության համար Խորհրդային Հայաստանի վեց տարիների դոյության ընթացքում բաւականին արժէքաւոր գործեր է կատարուել։

Նախ ասենք, որ Խորհրդային Հայաստանի վարիչները նպատակ են դրել երկրում վերացնել անդրագիտությունը։ Բոլորի համար էլ պարզ է, որ կարճ ժամանակի ընթացքում հնարաւոր չի լինի անդրագիտությունը վերացնել մէկ երկրում, որտեղ մինչև խորհրդային դառնալը, գրագէտների թիւը խիստ աննշան էր։ Սակայն խորհրդային վարիչների հպարձակ քայլը, միանդամայն զոհասանքի և խրախուսանքի արժանի է։ Անդրագիտությունը վերացնելու համար, Հայաստանի զանազան վայրերում բացուած են՝ քաղաքական լուսաւորության կամ կրճատ՝ քաղլուսավարական դպրոցներ։ Այսպիսի դպրոցներ, Հայաստանում և ոչ մի կառավարության ժամանակ չի եղել։ ա) Այդպիսի դպրոցներ կամ ինչպէս կոչում են անդրագիտության լիկկեաններ, որոնց նպատակն է 3 ից 6 ամսւա ընթացքում բոլորովին անդրագէտ բանւորներին, ծառայողներին և գիւղացիներին կիսագրագէտ դարձնել, 1925 թ-ի սկզբում Հայաստանում եղել են 482 հատ, ունեցել են 557 ուսուցիչ և 15, 473 սովորող։ բ) Կիսագրագիտության լիկկեաններ եղել են 65 հատ. ունեցել են՝ 77 ուսուցիչ և 1000-ի չափ սովորողներ։ Այստեղ սովորողները 3-6 ամսից յետո, կարողանում են նամակներ գրել, թերթեր կարդալ և այլն։ գ) Բարձր տիպի դպրոցներ, որտեղ ընդունւում են գրագէտ դարձածները. եղել են 48, ունեցել են 57 ուսուցիչ և 1071 սովորող։ Բարձր տիպի դպրոցն աւարտելուց յետո, բանւորը մտնում է բանֆակ (բանւորական ֆակուլտետ)։ դ) Բաղդրագիտության լիկկեանների թիւն եղել է 145, իսկ ունեցել են 5266 սովորող։ Սրանք ծանօթանում են քաղաքական դաստիարակության տարրերի հետ և այլն։

Բ. Խորհրդային Հայաստանում կան՝ հանրակրթական կամ սոցիալական դաստիարակության, կրճատ՝ «սոցդաստիարականներ» հիմնարկություններ։ Այդպիսի դպրոցների և հիմնարկությունների թիւը 1925 թ. սկզբում Հայաստանում եղել է։

1. Մանկապարտէզներ, մանկական հրապարակներ և զաղութներ՝ 15 հատ, ունեցել են 63 ուսուցիչ և 1456 յաճախողներ։

2. Առաջին աստիճանի դպրոցներ՝ 702 հատ, 1693 ուսուցիչ և 65,283 սովորող։

3. Եօթնամեա դպրոցներ՝ 44 հ., 474 ուսուցիչ, 14659 սովորող։

4. Երկրորդ աստիճանի դպրոցներ՝ 12 հատ, 172 ուսուցիչ և 2404 սովորող։

Դ. Արհեստակցական լուսաւորություն (պրոֆեսիոնալ կրթություն)՝ «արհլուսավարական» դպրոցներ։ 1925 թ-ի սկզբում Հայաստանում դոյություն ունէին՝ ա. Մանկավարժական տեխնիկումներ 2 հատ (Երևան և Լենինականում), 20 ուսուցիչ և 132 սովորող։ բ. Շինարարական տեխնիկումներ՝ մեքենաղիտական, էլէքտրոտեխնիկայի և գիւղատնտեսական ճիւղերով, 2 հատ (Երևան և Լենինական) 39 ուսուցիչ և 308 սովորող։

գ. Գեղարուեստական տեխնիկում՝ նկարչական, քանդակագործական և ոսկերչական բաժիններով, 1 դպրոց, 17 ուսուցիչ և 154 սովորող։

դ. Մանկարարական դպրոց՝ 2 հատ, Երևանում և Լենինականում, 12 ուսուցիչ և 49 աշակերտուհի։

ե. Գիւղատնտեսական դպրոցներ, որոնք ունին եօթնամեա դպրոցական կրթության աստիճան, 11 հատ, 75 ուսուցիչ և 740 սովորող։

զ. Տեխնիկական դպրոց, կար մէկ հատ՝ Ստեփանաւանում, 5 ուսուցիչ և 58 սովորող։

է. Երաժշտական և Նկարչական ստուդիաներ (Լենինականում), 7 ուսուցիչ և 173 սովորող։

ը. Գործարանային, նաև արհեստանոց դպրոցներ՝ 25 հատ, 84 ուսուցիչ և 3036 սովորող։

թ. 1925 թ-ի յունուարին, զանազան մասնագիտություններ վերաբերեալ կային 11 հատ կարճատև կուրսեր, 55 ուսուցիչ, 728 յաճախորդ։

Այսպիսով 1925 թ-ի սկզբում Հայաստանում կային 1633 դպրոցներ, 3812 ուսուցիչներով և 115,006 աշակերտ-ուհիներով։

Դ. Բացի հայկական դպրոցներից, Հայաստանում ապրող ազգային փոքրամասնություններն էլ ունին իրենց առանձին, մայրենի լեզուով դասաւանդող դպրոցները։ Այսպէս. 1. Հայաստանում Թուրքթաթարները հաշւում են՝ 88,960 շունչ, ունին 98 դպրոց, 4170 աշակերտ։ Ունին նաև լիկկեաններ։

2. Հայաստանում հաշուում են՝ 21 786 հոգի ռուսներ, ունին 25 դպրոց և 2100 աշակերտուհիներ։

3. Եզդիները Հայաստանում հաշուում են 9,259 հոգի, ունին 11 դպրոց և 315 աշակերտ։

4. Հայաստանում հաշուում են 2 995 յոյներ, ունին 4 դպրոց և 330 աշակերտ։

5. Ասորիներ հաշուում են՝ 2,633 հոգի, ունին 5 դպրոց և 230 սովորող։

Հայաստանում կան նաև 1453-ի չափ անձեր զանազան ազգերի պատկանող՝ լատիշներ, հրեաներ, լեհեր և այլն, որոնք խիստ փոքրաթիւ լինելու պատճառով, սովորական դպրոցներ չունին և նրանց երեխաները սովորում են ղեկաւորապէս ռուսական դպրոցներում։

Փոքրամասնութեանց դպրոցների թիւը Հայաստանում հասնում է 143-ի, 7145 սովորողներով։ Ի հարկէ բոլորն էլ ունին լիկկեաններ։

Այս բոլորից պարզ երևում է, որ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնն ոչ մի խարութիւն չունենով իւր իշխանութեան ներքո ապրող ժողովրդների մէջ, հաւասարապէս ջանանում է, որ բոլորի համար էլ կրթութիւնը դառնա պարտադիր և բոլորի միջից էլ վերանա անգրագիտութիւնը։

Ինչպէս ընթերցողները կ՚տեսնեն մեր մէջ բերած աւեալները վերաբերում են 1925 թի սկզբին, որից անցել է արդէն երկու տարի։ Այլ գործունէութեան ասպարէզների համեմատական աշխատանքները ցոյց տուց, որ մեկ ամսուա մէջ անգամ խոշոր տարբերութիւններ լինում է, ուր մնաց թէ տարիների ընթացքի մէջ։ Այդպէս դատելով, կարող ենք ասել, որ Հայաստանում հանրային կրթութեան գործն էլ աւելի առաջադիմութիւն և զարգացում է ունեցել։ Ի հարկէ, բոլորիս համար էլ պարզ է, որ կրթութիւնը պարտադիր դարձնելն և անգրագիտութեան վերացումը մի երկրում, ուր զրագէտների թիւը, նախքան երկրի խորհրդային դառնալը խիստ սահմանափակ էր, մէկ տարուա կամ մի քանի տարիների գործ չէ։ Խորհրդային Հայաստանն ընդամենը վեց տարուա գործունէութիւն ունի, ոչ աւելի և նրա վարիչներն այդ ժամանակամիջոցի ընթացքում, հնարաւորն արել են։ Բանի որ նպատակն առաջադրուած է և ձգտում ու աշխատանք կա այդ նպատակին հասնելու, որը կասկածից դուրս է, ժամանակի ընթացքում յաղթահարելով բոլոր դժուարութիւններին, դրուած նպատակը կիրագործուի։ Զմոռանանք մի հանգամանք ևս։ Այդ այն է, որ մեր երկրում նախքան այնտեղ խորհրդային կարգերի հաստատումը, կրթական գործը խիստ անմխիթար

վիճակի մէջ էր գտնուում։ Այդ մասին, այդ դլխի սկզբում արդէն խօսել ենք, ուստի նախկին ժամանակներում եղած կրթական գործի հետ համեմատական պատկերի մէջ բերելն աւելորդ ենք համարում, ընդունելով, որ այդ խնդիրը բոլոր հայերի համար էլ, անկախ դաւանական տարբերութիւններից, միանդամայն պարզ է։ Եւ վերջապէս, որպէս զի հանրային կրթութիւնը լիապէս իրականանա, դրա համար հարկաւոր է բացի դպրոցական նոր շէնքեր կառուցելուց, դրենական և այլ պիտոյքներ մատակարարելուց, նաև պատրաստի ուսուցչական կոնտինդենդ, որն ստիպողական, դէպք է կազմել։

Մեզ յայտնի է, որ Խորհրդային Հայաստանի վարիչներն այդ խնդիրների շուտափոյթ իրագործմամբ զբաղուած են, որպէս զի կարողանան պարտադիր ուսումը լիապէս իրականացնել։

Ե. ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԵՒ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ.— Հայաստանում ներկայումս դոյութիւն ունին երկու բարձրագոյն կրթարաններ։ Դրանցից մէկի՝ համալսարանի հիմնադրութեան և Երևան փոխադրելու մասին արդէն խօսել ենք։ Այստեղ ասենք, որ համալսարանի վրա, խորհրդային վարիչները յատուկ ուշադրութիւն են դարձրել։ Համալսարանական աշխատանքները կանոնաւոր հիմքերի վրա դնելուց զատ, նրա կրթական մակարդակն էլ բարձրացուած և բաղմացրած է։ Հայաստանի համալսարանն ունի՝ Ա. Հասարակագիտական ֆակուլտետ, որի ստորաբաժանումներն են՝ ա) Մանկավարժական, բ) Իրաւաբանական և Պատմագրական ճիւղեր։ Մանկավարժական ճիւղն իւր հերթին ունի՝ 1. Ֆիլիկոմաթեմատիքական, 2. Բիոլոգիական և 3. Պատմագրական մասնաճիւղեր։

Բ. Գիւղատնտեսական, Գ. Տեխնոլոգիական և Դ. Բժշկական ֆակուլտետներ։ 1925-26 ուսումնական տարում Բժշկական ֆակուլտետին կից բացուած է նաև Մակարարձական մասնաճիւղ։ Համալսարանի բոլոր ֆակուլտետներում և մասնաճիւղերում աղջիկներն համամասնաւորապէս, սովորում են նաև աղջիկներ, որոնք ընդհանուր ուսանողութեան 40 տոկոսն են կազմում։ Եթէ ի նկատի ունենանք, որ ցարական կառավարութեան ժամանակ, մեր ժողովրդի միջնակարգ կրթութիւն ստացած զաւակներից շատ-շատերը հնարաւորութիւն չունէին հաճարարաններ մտնելու՝ տնտեսական և այլ պատճառներով, այն ժամանակ բոլորիս համար պարզ կ՚լինի, որ Հայաստանի մայրաքաղաք Երևանում կանոնաւոր հիմքերի վրա դրուած համալսարանը, մեր ժողովրդի համար մի մեծ բարիք է։ Մանաւանդ, որ այդ համալսարանն ու-

նեոր դասակարգի մենաշնորհը չէ, այլ երկրի խոնարհ խաւերի ուսանողութեանն է գերակշռութիւն տրւում. իսկ մեր երկրում մեծամասնութիւն են կազմում խոնարհ խաւերը՝ բանւորներ, գիւղացիներ և այլն։ Որպէս զի բանւորներն էլ զրկւած չմնան համալսարանական կրթութիւնից, նրանց համար յատուկ բանւորական ֆակուլտետներ են հիմնւած՝ Երևանում և Լենինականում, ուր բանւորները ստանում են միջնակարգ կրթութիւն և բանֆակը վերջացնելուց յետո, կարողանում են մտնել՝ համալսարանը։

Հայաստանի պետութիւնը կոչւելով՝ բանւորա-գիւղացիական, նա իւր անւանն և ըմբռնումներին համապատասխան, ամեն ջանք գործադրում է՝ բանւորների, գիւղացիների և ընդհանրապէս աշխատաւորութեան, ոչ միայն տնտեսական, այլ և կրթական մակարդակի բարձրացման վրա։

Համալսարանը քանի որ մեր երկրում նոր է, պարզ է, որ նրա պրոֆեսորական կազմը, առայժմ շատ ուժեղ չէ, սակայն, հայ կեանքում աչքի ընկած ուսուցչապետներից շատերն այնտեղ են դասախօսում։

Պրոֆեսորների ուժեղ կազմը, նոյնպէս ժամանակի ընթացքում պէտք է ստեղծւի։ Մեր երկրի զարգացման և առաջադիմութեան հետ զուգընթաց, կաւելանա ուսուցչապետների պահանջը, որը սրսոսոս կը-դառնա, նոր և աւելի պատրաստի մարդկանց հրապարակ գալուն։

1925 թւի սկզբում Հայաստանի համալսարանի ուսանողութեան թիւը հասնում էր՝ ա) Հասարակական ֆակուլտետում 489 անձի, որից տղա՝ 362, աղջիկ՝ 127. բ) Գիւղատնտեսական ֆակուլտետում՝ 336 անձի, որից տղա՝ 248, աղջիկ՝ 88. գ) Տեխնոլոգիական ֆակ.՝ 127 անձի, որից տղա՝ 115, աղջիկ՝ 12։

դ) Բժշկական ֆակ.՝ 248 անձի որից տղա՝ 170, աղջիկ՝ 78 հոգի։ Ընդամենը համալսարանում եղել են՝ 1200 ուսանողներ, որից տղա՝ 895 հոգի և աղջիկ 305 անձ։

1925 թւին Հասարակական և Գիւղատնտեսական ֆակուլտետները տուել են իրենց անդրանիկ շրջանաւարտները։

Քանի որ շինարարական բաժնի մէջ արդէն խօսել ենք շէնքերի և առհասարակ «համալսարանական քաղաքամասի» տրթիւ, այստեղ նորից այդ խնդրի վերաբերմամբ կանգ առնելն աւելորդ ենք համարում։ Ասենք, որ համալսարանն ունի նաև հարուստ գրադարան, որի գրքերի թիւը հասնում է 50,000 ի։

2. ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ.— Հայաստանում հիմնւած է նաև երաժշտական բարձրագոյն կուրսեր, ուր պարապմունքները ղեկավարում են 18 երաժշտագէտներ։ Այդ կոնսերվատորիայում 1925 թւի սկզբում եղել են՝ 213 տղա և 118 աղջիկ ուսանողներ։ Երաժշտական բարձրագոյն դպրոցը նոյնպէս մեր երկրում խոշոր անելիքներ ունի։

Մեր ժողովրդական երգերը հաւաքելու, կանոնաւորելու համար, նոյնպէս և բազմաթիւ հայ դպրոցներում երաժշտութեան դասեր պարապելու համար, երաժշտագէտների խիստ մեծ կարիք կայ։ Այդ բացը գոցելու է կոչւած՝ Երաժշտական բարձրագոյն դպրոցը, որը ժամանակի ընթացքում աւելի մեծանալու և ընդլայնւելու է։

Կոնսերվատորիայի վերաբերմամբ, Խորհրդային Հայաստանի պաշտօնական օրգանի մէջ դիտողութիւններ կան, որ «Կոնսերվատորիան մեծ տեղ է տուել արևմտեան երաժշտութեանն և առաջարկւում է կարևոր տեղ տալ՝ արևելեան և ազգային երաժշտութեանը»։ Այս դիտողութիւնը համարելով միագամայն տեղին, մենք էլ երկրորդում ենք։

Մի ուրիշը գրում է. «Շեշտում ենք, որ հին արևելեան երաժշտութիւնը պիտի ուսումնասիրւի, դուրս բերելու համար նրանից այն կառուցւածքային խնդիրները, որոնք օգտակար կարող են լինել նորի համար և վերջապէս արևմտեանը պիտի ուսումնասիրւի յօդուտ մեր երաժշտութեան վերաստեղծման»։ (Խ. Հ. 1926 թ. № 166.)

Այս դիտողութիւններն համարելով տեղին, միաժամանակ ապացուցում են, որ երկում աչքաթող չեն անում հիմնարկութիւնների մէջ եղած թերիներն և աշխատում են պակասաւորը շտկել, կատարեալին հասնելու համար։

Վերոգրեալ կրթական հիմնարկութիւններից զատ, Խորհրդային Հայաստանում մեծ ուշադրութիւն է դարձւում նաև արտադպրոցական կրթութեան վրա։ Արտադպրոցական հիմնարկութիւններից նշանաւորներն են՝ ա). ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ, որը բոլորել է իւր՝ Խորհրդային Հայաստանում գործունէութեան հինգամեա շրջանը։ 1927 թւի յունուարամսի 25-ին, Երևանում տօնել է պետական Թատրոնի գործունէութեան հինգամեակը և այդ առթիւ Հայաստանի Կենտգործկոմը՝ «Վաստակաւոր դերասանի» կոչում է տուել՝ դերասանուհիներ՝ Արուս Ոսկանեանին, Յասմիկ Յակոբեանին և դերասան Գրիգոր Աւետեանին։

1925-26 թւի սեզոնում, Երևանում դրւել է՝ 8 նոր, 10 վերան որոգւած բեմադրութիւն։ Տեղի են ունեցել 111 ներկայացում, որոնց ներկա են եղել 47,054 յաճախորդ։ Միջին հաշւով իւրաքանչիւր ներկայացմանը յաճախել են 424 հանդիսական։

Ներկայացումներ տեղի են ունեցել նաև Հայաստանի միւս քա-

նևոր դասակարգի մենաշնորհը չէ, այլ երկրի խոնարհ խաւերի ուսանողութեանն է դերակշռութիւն տրւում. իսկ մեր երկրում մեծամասնութիւն են կազմում խոնարհ խաւերը՝ բանւորներ, գիւղացիներ և այլն։ Որպէս զի բանւորներն էլ զրկւած չմնան համալսարանական կրթութիւնից, նրանց համար յատուկ բանւորական ֆակուլտետներ են հիմնւած՝ Երևանում և Լենինականում, ուր բանւորները ստանում են միջնակարգ կրթութիւն և բանֆակը վերջացնելուց յետո, կարողանում են մտնել՝ համալսարանը։

Հայաստանի պետութիւնը կոչւելով՝ բանւորա-գիւղացիական, նա իւր անւանն և ըմբռնումներին համապատասխան, ամեն ջանք գործադրում է՝ բանւորների, գիւղացիների և ընդհանրապէս աշխատաւորութեան, ոչ միայն տնտեսական, այլ և կրթական մակարդակի բարձրացման վրա։

Համալսարանը քանի որ մեր երկրում նոր է, պարզ է, որ նրա պրոֆեսորական կազմը, առայժմ շատ ուժեղ չէ, սակայն, հայ կեանքում աչքի ընկած ուսուցչապետներից շատերն այնտեղ են դասախօսում։

Պրոֆեսորների ուժեղ կազմը, նոյնպէս ժամանակի ընթացքում պէտք է ստեղծւի։ Մեր երկրի զարգացման և առաջադիմութեան հետ զուգընթաց, կաւելանա ուսուցչապետների պահանջը, որը սրբոնկը դառնա, նոր և աւելի պատրաստի մարդկանց հրապարակ գալուն։

1925 թւի սկզբում Հայաստանի համալսարանի ուսանողութեան թիւը հասնում էր՝ ա) Հասարակական ֆակուլտետում 489 անձի, որից տղա՝ 362, աղջիկ՝ 127. բ) Գիւղատնտեսական ֆակուլտետում՝ 336 անձի, որից տղա՝ 248, աղջիկ՝ 88. գ) Տեխնոլոգիական ֆակ.՝ 127 անձի, որից տղա՝ 115, աղջիկ՝ 12։

դ) Բժշկական ֆակ.՝ 248 անձի որից տղա՝ 170, աղջիկ՝ 78 հոգի։ Ընդամենը համալսարանում եղել են՝ 1200 ուսանողներ, որից տղա՝ 895 հոգի և աղջիկ 305 անձ։

1925 թւին Հասարակական և Գիւղատնտեսական ֆակուլտետները տւել են իրենց անդրանիկ շրջանաւարտները։

Քանի որ շինարարական բաժնի մէջ արդէն խօսել ենք շէնքերի և առհասարակ «համալսարանական քաղաքամասի» մասին, այստեղ նորից այդ խնդրի վերաբերմամբ կանգ առնելն աւելորդ ենք համարում։ Ասենք, որ համալսարանն ունի նաև հարուստ գրադարան, որի գրքերի թիւը հասնում է 50,000 ի։

2. ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ.— Հայաստանում հիմնւած է նաև երաժշտական բարձրագոյն կուրսեր, ուր պարապմունքները ղեկավարում են 18 երաժշտագէտներ։ Այդ կոնսերվատորիայում 1925 թւի սկզբում եղել են՝ 213 տղա և 118 աղջիկ ուսանողներ։ Երաժշտական բարձրագոյն դպրոցը նոյնպէս մեր երկրում խոշոր անելիքներ ունի։

Մեր ժողովրդական երգերը հաւաքելու, կանոնաւորելու համար, նոյնպէս և բազմաթիւ հայ գաղթականներում երաժշտութեան դասեր պարապելու համար, երաժշտագէտների խիստ մեծ կարիք կայ։ Այդ բացը գոցելու է կոչւած՝ երաժշտական բարձրագոյն դպրոցը, որը ժամանակի ընթացքում աւելի մեծանալու և ընդարձակւելու է։

Կոնսերվատորիայի վերաբերմամբ, Խորհրդային Հայաստանի պաշտօնական օրգանի մէջ դիտողութիւններ կան, որ «Կոնսերվատորիան մեծ տեղ է տւել արևմտեան երաժշտութեանն և առաջարկւում է կարևոր տեղ տալ՝ արևելեան և ազգային երաժշտութեանը»։ Այս դիտողութիւնը համարելով միագամայն տեղին, մենք էլ երկրորդում ենք։

Մի ուրիշը գրում է. «Շեշտում ենք, որ հին արևելեան երաժշտութիւնը պիտի ուսումնասիրւի, դուրս բերելու համար նրանից այն կառուցւածքային խնդիրները, որոնք օգտակար կարող են լինել նորի համար և վերջապէս արևմտեանը պիտի ուսումնասիրւի յօդուտ մեր երաժշտութեան վերաստեղծման»։ (Խ. Հ. 1926 թ. № 166.)

Այս դիտողութիւններն համարելով տեղին, միաժամանակ ապացուցում են, որ երկում աչքաթող չեն անում հիմնարկութիւնների մէջ եղած թերիներն և աշխատում են պակասաւորը շտկել, կատարեալին հասնելու համար։

Վերոգրեալ կրթական հիմնարկութիւններից զատ, Խորհրդային Հայաստանում մեծ ուշադրութիւն է դարձւում նաև արտադպրոցական կրթութեան վրա։ Արտադպրոցական հիմնարկութիւններից նշանաւորներն են՝ ա). ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ, որը բոլորել է իւր՝ Խորհրդային Հայաստանում գործունէութեան հինգամեա շրջանը։ 1927 թւի յունուարմամի 25-ին, Երևանում տօնւել է պետական Թատրոնի գործունէութեան հինգամեակը և այդ առթիւ Հայաստանի կենտրոնական գործկոմը՝ «Վաստակաւոր դերասանի» կոչում է տւել՝ դերասանուհիներ՝ Արուս Ոսկանեանին, Յասմիկ Յակոբեանին և դերասան Գրիգոր Աւետեանին։

1925-26 թւի սեզոնում, Երևանում դրւել է՝ 8 նոր, 10 վերան որոգւած բեմադրութիւն։ Տեղի են ունեցել 111 ներկայացում, որոնց ներկա են եղել 47,054 յաճախորդ։ Միջին հաշւով իւրաքանչիւր ներկայացմանը յաճախել են 424 հանդիսական։

Ներկայացումներ տեղի են ունեցել նաև Հայաստանի միւս քա-

գաղութներում և քիչ թե շատ աչքի ընկնող վայրերում։

Այդ սեզոնում արտասահմանից Հայաստան է վերադարձել դերասան Յ. Աբելյանը, որին «ժողովրդական դերասան» կոչում է տրված։ Վիեննայից Հայաստան է անցել մի այլ բեմական ուժ՝ Արմինե Ասլանյանը։ Երկիր վերադարձողներին և այնտեղ եղած դերասաններին զուգընթաց, տեղում առաջ են գալիս նոր ուժեր, որոնք դնելու են՝ ապագա ժողովրդական մեծ թատրոնի հիմքը։

Ժողովրդի կրթության և դաստիարակության տեսակետից անչուշտ խոշոր անելիքներ ունի թատրոնը, որի համար երկրի իշխանությունը միջոցներ չի խնայում։ Դերասաններն աղատվել են նախկին շրջաններում եղած աննորմալ կացությունից։ Նրանք պետությունից ռոճիկ են ստանում, հետևապես ազատ են ապրուստի հոգսի մտատանջությունից և նվիրվելու են միայն և միմիայն գեղարվեստի զարգացման և բարձրացման գործին։

բ) Ներկայացումներին զուգընթաց, մեծ ուշադրություն է դարձվում նաև կինոների վրա։ Երևանում և Հայաստանի այլ կենտրոնավայրերում գործում են կինոները։ Հայաստանի Պետլուսկինոն պատրաստում է հայ կյանքից և գրականությունից առած ֆիլմեր, ձեռք է բերում նաև արտասահմանյան նշանավոր ֆիլմեր և ժողովրդին ցուցադրում է։ Հայաստանի Պետլուսկինոի պատրաստած սովետական ֆիլմերից յուրատակինք՝ «Խորհրդային Հայաստան» և «Նամուս» ֆիլմերը, որոնք ցուցադրվել են նաև արտասահմանում և մեծ յաջողություն են ունեցել։

գ) Հայաստանի բոլոր կենտրոններում և գյուղերում հիմնված են՝ խրճիթ-ընթերցարաններ, որոնց նպատակն է ժողովրդի մեջ տարածել գրականությունն և նրանց մեջ ընթերցանության սեր զարթեցնել։ Խրճիթ-ընթերցարանները բացի գրականություն տարածելուց, գյուղացիների համար յաճախակի, մատչելի դասախոսություններ և ներկայացումներ են կազմակերպում։ Դասախոսությունները մեծ մասամբ նվիրված են լինում գյուղատնտեսական խնդիրների պարզաբանությանը։

Նույն նպատակով երբեմն կազմակերպում են գյուղատնտեսական դատավարություններ և այլն։

դ) Աչքի ընկնող տեղ է գրաւում Երևանի հանրային գրադարանը։ Այնտեղ ամփոփված են հայ լեզվով գոյություն ունեցող բոլոր գրական, գիտական, պատմագրական և այլ տեսակի գրքերն ու հրատարակությունները։ Այնտեղ է կենտրոնացած նաև՝ հայ կյանքին վերաբերող բոլոր օտար լեզուներով եղած հրատարակությունները։ Հանրապետական Հայաստանի ժամանակ, մտածվեց այդ գրադարանի հիմ-

նման մասին։ Գործի կազմակերպությունն ու ղեկավարությունը յանձնված էր պատմագիտ պ. Ստ. Կանայանին, որն երկար ժամանակ գտնվում էր Թիֆլիզում և այդ ուղղությամբ աշխատանքներ էր կատարում։ Սակայն գրադարանի Հայաստան տեղափոխելը, նրա ճոխացնելը և կանոնավորելը կատարվել է խորհրդային կարգերի ժամանակ։ Այժմ Խորհրդային Հայաստանն ունի մի ճոխ գրադարան, որից անխտիր կարողանում են օգտվել բոլորը։ Գրադարաններ կան նաև մեծ քաղաքներում և կենտրոններում։ Գրադարաններ ունին, նաև գյուղերում գոյություն ունեցող բոլոր խրճիթ-ընթերցարանները։ Այսպիսով, պարզ է, որ ժողովրդի ընթերցանության վրա նույնպես յատուկ ուշադրություն է դարձվում։

ե) Երևանում հիմնված է թանգարան, ուր ամփոփված են բոլոր հնությունները։ Հայաստանում, գլխավորապես քաղաքներում կան ակումբներ (բանակումբներ և այլն)։

զ) Հայաստանում մեծ ուշադրություն է դարձվում մամուլի և այլ գրական, գիտական, քաղաքական և հասարակական հրատարակությունների վրա։

Մի խոսքով, Հայաստանում դպրոցական կրթությանը զուգընթաց, առաջ է տարվում նաև արտադպրոցական կրթությունը, որը լմացականության և դաստիարակության տեսակետից խոշոր տեղ է գրավում։

Ինչպես ընթերցողներն էլ կը համոզվեն, Հայաստանում ամեն հնարավոր միջոց գործադրվում է ժողովրդի կրթական մակարդակը բարձրացնելու համար։ Առաջին հերթին խնամք է տարվում բանվոր և գյուղացի մասսաների կրթության վերաբերմամբ և դա միանգամայն հասկանալի է։ Կառավարությունը հաստատում իր «բանվորա-գյուղացիական» կոչմանը, ամեն ինչ անում է Հայաստանի բանվորների և գյուղացիների համար, ամեն գործի մեջ առաջնորդվելով վերջիններիս շահերի տեսակետով։

Հնում, ցարական Ռուսաստանում, որի մի մասն էր կազմում Կովկասը, հետևապես այժմեան Հայաստանը, կրթական գործի վրա առանձին ուշադրություն չէր դարձվում և կրթական նախարարության բիւջեն, միւս նախարարությունների համեմատությամբ, ամենայնետնեալ տեղն էր գրաւում։ Իսկ ներկայումս, առհասարակ Խորհրդային Միության մեջ և մասնաւորապես Հայաստանում, կրթական ժողկոմատն առաջնակարգ տեղերից մեկն է գրաւում և բիւջէի խոշոր մասը

կրթական գործին է յատկացուում։

1925-26 տարեշրջանում, Հայաստանի կրթական գործին յատկացած է պետական բիւջէի 45 տոկոսը։ Այս էլ ինքնին ապացուցում է, որ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը ժողովրդի կրթութեան, առաջադիմութեան և զարգացման համար, ոչինչ չի խնայում։

* * *

Վերոյիշեալ աշխատանքի վերաբերեալ մեր խօսքն եզրափակենք։ Ընթերցողներն անշուշտ ուշադրութեան առան, որ մենք այս անգամ կանգ առանք խորհրդային կարգերի օրօք կատարուած աշխատանքներից զլխաւորապէս՝ շինարարական և կուլտուրական ձեռնարկութիւնների վրա։ Խորհրդային Հայաստանում կատարուել և կատարուում են նաև ուրիշ օգտաշատ աշխատանքներ, որոնց վրա այս անգամ կանգ առնելու հնարաւորութիւն չունեցանք։

Մեր ընթերցողներն անշուշտ նկատեցին, որ մեր ձեռքի բերած թուական տուեալները երբեմն վերաբերում էին 1926 թուականին, երբեմն էլ 1925 թուականին։ Դրա պատճառը միանգամայն պարզ է։ Մենք զանազան հայրենիքից հեռու, ձեռքի տակ չենք կարողացել ունենալ այնտեղ տպագրուած՝ զանազան ճիւղերին վերաբերող բազմաթիւ հրատարակութիւնները։ Թուական տուեալները մենք քաղել ենք մեր ձեռքն անցած երկրի պաշտօնական օրգան «Խորհրդային Հայաստան»-ի և Հօկի կենտրոնական Վարչութեան պաշտօնական օրգան «Հրաւէրակ»-ի զանազան համարներից։ Ճիշտ է թուական տուեալները տարբեր ժամանակների են վերաբերում, սակայն այդ ոչնչով չի խանգարում ընդհանուր գործին, որը կատարուել և կատարուում է ի շահ ժողովրդի։

Վերոգրեալ ամբողջ զրուածքից պարզ երևում է, որ խորհրդային Հայաստանի կառավարութիւնն ամեն գործ կատարուում է ժողովրդի միջոցով և ժողովրդի համար։ Այս արդէն այնքան ակնյայտ է, որ չեն կարող ուրանալ և նրանք, որոնք ոխակալութեամբ են լեցուած՝ Հայաստանի վարիչների դէմ։ Այսպիսի գործունէութիւն չի կատարուել՝ ոչ մի երկրում և ոչ մի յեղափոխութեան ժամանակ։ Սա խիստ կարևոր գործելակերպ է, որին պէտք է ամեն կերպ օժանդակել։

Ի հարկէ, երկիրը դեռ կազմակերպական շրջանումն է գտնուում. ինչպէս այդ յատուկ է բոլոր նոր կազմակերպուող երկրներին, այնպէս էլ մեր երկրում որոշ գործեր կարող են թոյլ լինել, բայց չը-

մոռանանք, որ խորհրդային կարգերի գոյութիւնը վեց տարուա կեանք ունի միայն։ Մեր երկիրն այնքան քայքայուած և աւերուած էր, որ վեց տարում հնարաւոր չըպիտի լինէր այն լիակատարապէս վերաշինել։ Թէկուզ այնտեղ ինչպիսի կառավարութիւն էլ գոյութիւն ունենար։ Հակառակ դրան, մենք տեսնում ենք, որ Հայաստանի վարիչները շինարարութեան և վերաշինման տեսակէտից ոչ մի ջանք չեն խնայում և դրա շնորհիւ էլ մեր երկիրը ծաղկում և բարգաւաճում է։ Զմոռանանք, յիշատակելու, որ մեր երկրի վերաշինմանը մեծապէս օժանդակում է Խորհրդային Մեծ Միութիւնը։

Մեր կարծիքով, խորհրդային վարիչների գործելակերպի մէջ կարևորը ՍԻՍՏԵՄՆ է, որը ժողովրդի համար խիստ օգտակար է, ուստի պէտք է աշխատել և ամեն միջոցով նպաստել այդ սիստեմի զարգացմանը։

Ի հարկէ, ինչպէս գիտենք պատմութիւնից էլ. իրաքանչիւր յեղափոխութիւն իր սկզբնական գործունէութեան շրջանում կարող է թերութիւններ ունենալ։ Երբեմն, յեղափոխական բուռն ժայթքումներ տեղի են ունեցել նաև Ռուսական Մեծ Յեղափոխութեան ժամանակ։ Եթէ անկողմնակալ կերպով դատենք, կտեսնենք, որ այդ խստութիւններն ու դաժանութիւնները ժամանակի պահանջի համաձայն, անհրաժեշտութիւն են եղել։ Մանաւանդ, եթէ ի նկատի առնենք, որ սկզբնական շրջանում, շատերը նոր կարգերը դանելով, ոչ թէ ժողովրդի, այլ իրենց անձնական ու դասակարգային շահերի տեսակէտից վնասակար, աշխատում էին պայքարել Յեղափոխութեան դէմ, որպէս զի կարողանան քայքայել այն և վերականգնել՝ իրենց անձնական ու դասային տիրապետութիւնը։ Բնականաբար, այդպիսի շրջաններում, Յեղափոխական գործունէութեան միջոցները հակառակորդների համար, աւելի խիստ ու դաժան պէտք է թւար։

Եւ ոչ Յեղափոխութիւնն է պատմութեան մէջ, որ այդպիսի շրջաններ չի ունեցել, մինչև նոր կարգերի հաստատումը։ Այդպիսի ընթացք ունեցաւ նաև Ռուսական Մեծ Յեղափոխութիւնն իւր սկզբնական շրջանում, որն անուանած է՝ «ռազմական կոմունիզմի շրջան»։

Բայց տարիների գործունէութեան ընթացքն ապացուցեց, որ կոմունիզմն իւր «ռազմական»—շրջանից վաղուց ի վեր անցել է կուլտուրական—շինարարական շրջանին, որն ազգաբնակութեան համար լիակատար խաղաղութիւն և բարիք է բերել, որն ապագայում աւելի ևս բարգաւաճելու է։ Այս բոլորին տեղեակ լինելով, նախաձեռնանալու և բարգաւաճելու է։

կին հակառակորդ համարած սոցիալիստական կուսակցութիւնները (չենք խօսում միապետականների և բուրժուական կուսակցութիւնների մասին), եթէ իրօք նրանք ժողովրդի բարեկամներն են, պէտք է մէկդի դնէին իրենց անձնական ոխակալութիւնն և անկեղծօրէն հաշտուէին երկրի իշխանութեան հետ, առանց կուսակցական արժանապատուութեան խնդիր յարուցանելու։ Կուսակցութիւնները ստեղծուած են ժողովրդի կարիքներին և արդար պահանջներին բաւարարութիւն տալու և ոչ որոշ անհատների անձնական ցանկութիւններին բնթացք տալու համար։ Այսպէս եթէ առաջնորդուէիր լինէին սոցիալիստական կուսակցութիւնները, վաղուց արդէն իրենց գէնքերը ցած դրած կ'լինէին և տեսնելով երկրում կատարուող շինարար և ստեղծագործական աշխատանքները, իրենք էլ առանց ամբիցիայի (արժանապատուութեան) խնդիր մէջ բերելու, կմասնային Յեղափոխութեան սկզբնական շրջանում իրենց կրած անձնական վիրաւորանքներն և անկեղծօրէն կաջակցէին ժողովրդի բարգաւաճման գործին։

Իրականութիւնը, սակայն, դժբախտաբար հակառակն է ասում և անցեալում ժողովրդի բարեկամներ համարուածները, իրենց անձնական արժանապատուութիւնն աւելի բարձր են դասում, քան թէ ժողովրդի շահերը։ Այդ պատճառով էլ նրանք շարունակում են՝ ժողովրդի օգտի համար կատարուած աշխատանքների դիմաց կոյր ձեռնալ և անտես անելով երկրում կատարուող կուլտուր-շինարարական խոշոր աշխատանքները, մնում են երկրի կառավարութեան ընդդիմադիրների շարքում։

Ցաւում ենք այստեղ ասել, բայց այդ դժբախտաբար իրականութիւն է, այդ սոցիալիստական կուսակցութիւնները չեն քաշւում մինչև իսկ բարեկամական ձեռք մեկնել, անցեալում իրենց ոխերիմ թշնամի համարուած՝ միապետական, բուրժուական, շովինիստ և այլ կուսակցութիւնների և խմբակցութիւնների, որպէս զի այդպիսիների օժանդակութեամբ, իբր թէ կարողանան, իրենց անձնական վրէժն առնել։ Այսպիսի գործելակերպը, ի հարկէ անվեղծ, ժողովրդավար սոցիալիստական կուսակցութիւններին վայել չեն, ուստի և նրանց շարքերն օր աւուր նօսրանում են և այդպէս էլ շարունակելու է, մինչև լիակատար քայքայումն, որը շատ էլ հեռու չէ։

Նման գործելակերպի է հետևում, դժբախտաբար, նաև Հ. Յ. Դաշնակցութիւն կուսակցութիւնը։

Համաշխարհային պատերազմի ժամանակ և նրանից էլ յետո, Հայ ժողովուրդը բացառիկ պայմաններում էր գտնւում։ Հայութիւնը

ներքին և արտաքին կռիւների և պատերազմների հետևանքով այնքան էր քայքայւել, որ կազդուրւելու խիստ կարիք ունէր։ Այդ կազդուրումը նրան բերեց մեծամասնական իշխանութիւնը, մեր երկրում երկրորդ անգամւա հաստատումով։ Եւ թւում էր, որ Հ. Յ. Դ-ական պատկանողները վերջապէս պէտք է զգաստանային, նկատելով հայ ժողովրդի համար կատարւող օգտակար աշխատանքները։ Մի պահ կարծէք այդպէս էլ ցանկացան անել, բայց նրանց խանդարեց կուսակցական արժանապատուութեան խնդիրը։ Դաշնակցական գլխավորները բանակցութիւններ սկսեցին մեծամասնականների հետ, միշտ պայման դնելով, որ մեծամասնականներն իրենց որպէս լեգալ կուսակցութիւն ճանաչեն (Ռիգայի և այլ բանակցութիւններ)։ Ուրիշ խօսքով նրանք ընդունում էին մեծամասնականների իշխանութիւնն, այն օգտակար էին համարում ժողովրդի համար, եթէ միայն իրենց կուսակցական զորութիւնէութեանն ազատ ասպարէզ տրւէր։ Մեծամասնականներն էլ, իրենց յայտարարած դիկտատուրայի ոգուց ելնելով և մանաւանդ դիմացինների անկեղծութեանը չ'հաւատալով, նման առաջարկները մերժեցին։ Եւ ահա, դրանից յետոյ, դաշնակցութեան դրած «լոյալ ընդդիմադիր» լոզունգը փոխւում է և Ժ-րդ Ընդհանուր ժողովում, (կայացաւ Փարիզում 1925 թւի սկզբում), նոր բանաձև ընդունեց, որը քարոզում է՝ «պայքարել մեծամասնականների աշխարհակալութեան դէմ։ Սրանից էլ ընթերցողները կարող են պարզ հետևութիւններ անել, որ նրանց չի զբաղեցրել կուսակցական ամբիցիայի հարցը, այլ գլխաւորապէս դեր է խաղացել անձնական արժանապատուութեան, զիրքի և պաշտօնի խնդիրները։

Դաշնակցութեան Ընդհանուր ժողովի նման բանաձև հանելու պատճառն էլ պարզ է։ Ընդհանուր ժողովում տեսնելով են նախկին՝ Բիւրո կառավարութեան անդամները՝ Ս. Վրացեան, Ռուբէն փաշա, Ա. Զամալեան և այլն, ուստի և Ընդհանուր ժողովը փոխանակ դատապարտելու Բիւրո կառավարութեան սխալ գործելակերպը, որի մասին, այս գրութեան սկզբում խօսել ենք, ընդունում է «պայքար»-ի բանաձևը և այդ բանաձի կիրառումը յանձնում է նոյն Բիւրո կառավարութեան անդամներին։

Դաշնակցութեան Ժ-րդ Ընդհանուր ժողովի կողմից ընտրուած Բիւրոն գործի գլուխ անցնելով, ամենուրեք սկսեց քարոզչութիւն կատարել հայրենիքի գլխավորների դէմ և աշխատեցին ու աշխատում է, իրենց հակաժողովրդական արարքներին աւելի «ակտիւ» բնաւորութիւն

թիւն տալ և տալիս են։

Երբ, Հայաստանի ղեկավարներն իրենք դաշնակցականներն էին և երկրի իշխանութեան տեղ տեղն էլ Դաշնակցութիւն կուսակցութիւնն էր, ամեն տեղ և իւրաքանչիւր առիթով, միևնոյն նշանաբանն էին հնչեցնում՝ «Գաղութահայութիւնը քաղաքականութեամբ չ՚պէտք է զբաղուի»։

Այժմ Դաշնակցութիւնը դառնալով գաղութահայ կուսակցութիւն, մոռացութեան է տուել երբեմնի իւր սիրելի, իսկ մեր կարծիքով չափազանց տեղին ու ճշմարիտ, լոզունգը և ինքն է քաղաքականութեամբ զբաղւում։ Եւ վարած քաղաքականութիւնն ոչ թէ իւր սեփական կուսակցական ըմբռնողութիւնից և կութիւնից է ըխում, այլ իմպերիալիստ պետութիւնների թելադրանքից է առաջ մղւում։

Զավազանց տարօրինակ է թւում մեզ, որ Դաշնակցութիւնը չի խրատուել անցեալի փորձերից և իմպերիալիստների սին խոստումներից՝ Սևրի, Լոզանի դաշնագրեր և համաձայնութիւններ և այժմս էլ այդ նոյն իմպերիալիստներին կառչած ամենուրեք թերթեր է հրատարակում և քարոզչութիւններ է կատարում հայրենիքի իշխանութեան դէմ։ Մի իշխանութեան, որի կուլտուր-շինարարական աշխատանքները խիստ ակնայայտնի են և ինչպէս վերն ասացինք նրա գործունէութեան սիրեմը միանգամայն օգտակար և խրախուսելի է։

«Գաղութահայութիւնը քաղաքականութեամբ չ՚պէտք է զբաղուի», այս ճշմարիտ դարձուածքը, այժմ մենք ենք կրկնում և պնդում։ Հանդիստ թողնենք երկրի իշխանութեանն իւր օգտաշատ գործը առաջ տանելու համար։ Եթէ որև է ձևով կարող ենք օգտակար հանդիսանալ երկրի իշխանութեանը, մեր աջակցութիւնը չ՚զլանանք, իսկ եթէ օտակար չենք կարողանում լինել, գոնէ անտեղի քարոզչութիւններով չ՚մթագնենք գաղութահայ աշխատաւորութեան ըմբռնողութիւնը։ Եւ, եթէ ճշմարիտ գործի և աշխատանքի գնահատութեան տեսակէտից մտանանք խնդիրներին, պէտք է աշխատենք այդ ճշմարտութեանը գիտակ դարձնենք և գաղութահայ լայն մասսաներին, որոնք մի պարզ եղրակացութեան կ՚գան՝ երկրի իշխանութիւնը՝ հայրենիքի ծաղկման, շէնացման, զարգացման ու առաջադիմութեան համար ջանք չի խնայում, ուրեմն մենք էլ ամեն հնարաւոր միջոցներով օգնենք այդ իշխանութեանը։

Այսպէս յարմար ենք համարում մէջ բերել՝ Հայաստանի Օգնութեան Կենտրոնական Կոմիտէի «Հրաւիրակ» 1926 թ. № 3 պաշտօ-

նաթերթի հետևեալ՝ միանգամայն արդարացի խօսքերը. «Եթէ նոյնիսկ այդ տարագիրները կարծում են, որ երկրի ներկա վարիչները, «մի օր պնալու են», ապա նրանք հօ չեն շալակելու և իրենց հետ տանելու չէ՞ նացրած քաղաքները ու գիւղերը, ջրանցքները ու կամուրջները, չէ՞ որ այդ բոլորը մնալու են այն երկրում ու այն ժողովրդի համար, որի անունից ամբողջ կոկորդով գոռում են իրենք»։

Այս դիտողութիւնը համարում ենք միանգամայն տեղին և յոյս ենք յայտնում, ինչպէս և նշաններն արդէն տեսնւում են, որ այսուհետև աւելորդ հարայ-հրոցների փոխարէն, կարժէքաւորի՝ երկրում կատարւող իրակ ան գործը, որն ակընբաև է և ամբողջ գաղութահայութիւնը, առանց կուսակցութիւնների և դաւանանքների խտրութեան օ-ժանդակութիւն կ՚հասցնի հայրենիքի շէնացման և առաջադիմութեան մեծ գործին։

Ս. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

1927 թ. Փետրուարի 15—ին։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍԵԱՄՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

«ԳԱՂԱՓԱՐ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

1. — ԲԺ. Ա. ՂԱԶԱՐԵԱՆ — Ս. Վրայեանը և անոյեալի իբոպոթիւնները . . . . 2 Ղրան
2. — ԲԺ. Ա. ՂԱԶԱՐԵԱՆ — Հայ լեզի աղղագրութեան խնդիրը . . . . . 2 Ղրան
3. — Ս. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ — Խարտրպային Հայաստան 2 » »

ԳԻՆՆ Է 2 ՂՐԱՆ.

Zuugt.' Arénu Nadiri, maison Alek Galstian, Têhéran

Rédaction «GAGHAPAR»

مطبعه روشنائی

ՀՀ Ազգային գրադարան
NL0193799

29.399